ՄԵՂՐԱ



№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1885

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

I Գառն ու գայլը . . . . . Ղ. Աղայեանց.
II Երկու քոյր (աւանդութիւն) . . . . . Զաբուհի.
III Աբձակուբդին վերջը (բանաստեղծութիւն) Թաչիկ.
IV Մուֆլու, անգղնական պոյտ (շարունակ. և վերջ) . . . . . Ռչեթ.
V Տեղափոխուելու զանազան միջոցները (կը շարունակուի)
VI Քրիստափոր Կոլումբոս և Ամերիկայի բացուիլը (կը շարունակուի) . . . . . .

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Աղաքսն աւելեից (կը շարունակուի) . . . . Ն. Տէր-Ալեհիքեան։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

XIX դարու ամենասարսափելի վոճրագործները։ Մամուկ և դոդոշ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Չաղացպանը և իր որդիքը։ Երկու ծոյլ։ Չեր ծանօթները։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ, առաջարկութիւններ, խնդիրներ։ Շուտասելուկ։ Բերան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բացուած է առաջիկայ 1886 թուականի «Աղբիւր»-ի բաժանորդագրութիւնը։

«Աղբիւր»-ի թէ ուղղութիւնը, և թէ դիրքը միևնոյնկըմնան։ Սիակ փոփոխութիւնը՝ աւելի շքեղ կըհրատարակուի։ Պրէմիաները կըլինին աւելի մեծ և աւելի շքեղ. 1) «ԱՆԻՒ ԱԻԵՐԱԿՆԵՐԻՑ», «ԱՐՔԵՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ», մի քառակուսի արշին մեծութիւնով, 2) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԻԶԸ», 3) Անիի աւերակներից «ՀՈՎՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՆ» մի ուիկէս քառակուսի արշին մեծութիւնով։

Ներկայ №-ի հետ աւելի յստակութեան համար ուղարկում ենք պատրաստած նամակներ և ծրարներ։ Յանկալի էր, որ բաժանորդ դրուողը փակագծերի մէջ դնէր իր ստեղացի լինելը։

Որպէսզի ներկայ 85 և յետ անցեալ 83 թուականների պէս տարուայ հէնց սկզբից ստիպուած չլինինք «Աղբիւր»-ի բաժանորդագրութիւնը պաղարացնելու №№-ի ՍՊԱՌԻՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ։ Խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել և թէ նոր կամեցողները ստորագրուել, որպէսզի մենք էս կարող լինինք մօտաւորապէս որոշել տպուելի համարների քանակութիւնը։

Սինչև դեկտեմբերի մէկը մնայն բաժանորդ գրուողը յունուարի №-ի հետ կրստանայ Անիի աւերակներից «ԱՐՔԵՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ» մեծագիր պատկերը։

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԵՒ

ՊԱՏԱՆԻՈՒԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1885

Ex Libris

ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(Կրիլովից)



Նուց մնացած մի լաւ առակ կայ,
Եւ շատ ուղիղ է, Աստուած է վըկայ,
Որ «Հպօրէն դէմ—թէև յանցաւոր—
Անզօր արդարն է լինում մեղաւոր»։

Այսպէս մէկ անգամ շոգից նեղացած մի ծարաւ գառնուկ խայտալով վազեց դէպի առուակը, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի, փոքր ինչ զովանայ, էլի յետ դառնայ։

Այդ իսկ րոպէին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս պրծաւ և կամաց-կամաց, սուս-փուս, գողի պէս, շան կերպարանքով գառին մօտեցաւ։ Ինչ ասել կուզի թէ ինչու համար. քաղցած գազան, փափլիկ գառնուկ, կառնէր կըտաներ և անուշ կանէր։

Բայց մէկէնմէկ նա այդպէս չարաւ, իսկոյն չտարաւ։ Զգիտեմ որտեղ մեր ծաղկաթաւալն ուսում էր առել, օրէնք սովորել, ուզեց իր գործը խեղճ գառնուկի հետ օրէնքով տեսնել, որպէսզի չասեն, թէ գառն արդար էր, գայլը՝ մեղաւոր։ Բայց ինչ էլ լինէր, գարձեալ գազան էր, կոպիտ բաւական, հետք չկար վրան մարդավարութեան, ինչպէս կըտեսնէք նրա խօսելից, վարուելու ձևից։

—Ա՛յ դու անպիտան, կենդանի անբան,—ասում է գառին գայլն իրաւաբան,—ինչ իրաւունքով և որ օրէնքով համարձակուել ես իմ մաքուր ջուրս, պարզ խմելիքս քո պիղծ բերանով այսպէս պղտորել ու ապականել աւազով, ցեխով և հազար տեսակ աղբ ու գիբիլով։ Քո այդ չանդուդն չարութեան համար գիտես ինչպիսի պատիժ կայ գրուած։

—Վսեմափայլ տէր, ես դիր չգիտեմ, բայց այսքանը

կասեմ, եթէ թոյլ կըտաս, որ ջուրը վարից վերև չի գնալ, դուք էլ կիմանաք։

—Ի՞նչ ես դուրս տալիս, ես չեմ հասկանում։ Ջուրը ներքևից վերև չի գնալ, այդ ո՛վ չգիտէ, էլ ասելդ ինչ է։

—Իմ ասելս այն է, վսեմափայլ տէր, որ դուք վերևից ևլաք դէպի ինձ։ Այդ էլ որ չլինի, մէկ լաւ նայեցէք, տեսէք. ինչ պարզ է, ինչքան մաքուր է։ Ջուր է, ճշմարիտ, ձեր բարկութիւնը։

—Տեսէք, մէկ տեսէք այս ստահակին, սրա աստծին։ Համարձակում ես, կենդանի անբան, տալ ինձ պատասխան։ Փու խելքով, ուրեմն, ես սուտ եմ խօսում, շաո եմ հնարում։ Ես լաւ յիշում եմ, և չեմ մոռացել, որ մէկել տարին էլի դու էիր, որ յանդգնեցար ինձ հակառակել, և հայհոյելով այստեղից փախար, ձեռիցս սրբեար։

—Մ՛իս, ինչ էք ասում, տէր իմ պատուական, դեռևս չկամ ես մէկ տարեկան։

—Ուրեմն եղբայրդ էր, էլ ո՛վ կըլինէր այնքան քեղ նման, քեղ պէս անպիտան։

—Ողորմած տէր իմ, ես եղբայր չունեմ։

—Ինձ համար մէկ է, ով կուզի լինի, միթէ դու չունէիս քաւոր, խնամի։ Մի խօսքով նա ձեր յիմար ցեղից էր։ Դուք, ձեր շները, ձեր հովիւները, ինձ չսիրելով, իմ չարն ուզելով, երբ որ կարենաք, միշտ վնաս կըտաք։ Այդ մեղքի համար ես հիմա դիտեմ, թէ քեղ ինչ կանեմ։

—Մ՛իս, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ,—գառն աղաղակեց,—ինչ է իմ մեղքս, սա չհաստատեց... Վսեմափայլ տէր, Ձերդ մեծութիւն...

—Լռի՛ր, անպիտան, ոչխարի լակոտ, իմ բան ու գործս խօսք չի կտրուել, որ քո յանցանքներդ սկսեմ քննել։ Եկ գնանք անտառ, ես այնտեղ կանեմ քո դատաստանը,—ասաց գազանը և մեր գառնուկին դրաւ շալակին...։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ։

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

ԱԽԱՆԴՈՒԽՏԻՆ

(Ըստ Գէորգեվիչի)

Լբանացի Հսկայ Խուրշուդի քոյր գեղեցիկ Ջուլման աղիողորմ լալիս էր: Նրա սիրլթնած այտերով արտասուքի կաթիլները թափվում էին, որպէս խոշոր մարգարտի հատիկներ: Կարծէք Ջուլման մտաբերել էր իր սիրելի մօրը, որնոր մի սոսկալի պատերազմում սպանուել էր իր քաջ ամուսնու մօտ: Բայց ոչ. այնժամանակ իր Հանդուգնեալին Ջուլման միայնակ չէր ողբալ, նրան կըհետևէր և իր կրտսեր քոյր Խայկան: Իսկ վերջինս, ընդհակառակն, ուրախ-ուրախ աշխատում էր եղբօր գ ո լ ա մ ի վրայի իր փայլուն գործուածքը վերջացնել:

Ո՛չ. գեղեցկուհին մօրը համար չէր լալիս, այլ իր միևուճար եղբայր Խուրշուդի համար: Ջուլման բոլորովին

նման չէր իր վառաբանեալ մօրը, որին ժողովուրդը շատ երգերով էր երգում, և ոչ էլ իր կրտսեր քոյր Խայկայինին, որը չէր լալիս եղբօր պատերազմ գնալու համար: Խայկան քաջ գիտէր, որ ալբանացին մշտ ուրախ է, եթէ մահը պատերազմի դաշտումն է հանդիպում: Ալբանացի ճշմարիտ հերոսը չպէտք է երբէք սարսափի այդ մահից: Խայկան գիտէր այդ և չէր լալիս եղբօրն սպառազինելիս: Փայլուն ժպիտն երեսին՝ հերոսին բերաւ նրա շողշողուն զէնքը, մէջքին կապեց կտրուկ թուրը և փայփայելով եղբօրը՝ ջերմ կերպով համբուրեց նրան, շոյելով նրա սև մլրուքը, որի տակից կրծքի վրայ շողշողում էր փայլուն զարդը... Իսկ դեղեցկուհի Ջուլման հէնց միաբերան ողբում էր: Նա բոլորովին մոռացել էր, որ Հայրենիքի թշնամու դէմ մարտի գնացող հերոսին ճանապարհ գցելիս լաց լինելը շատ ամօթ է և տխրիլը՝ մեծ նախատինք:

Երիտասարդուհի Խայկան դուրս քաշեց եղբօր սպիտակ նժոյգը: Նրա վրայի արծաթը դեղեցիկ փայլում էր: Փնքոյշ ձեռներով շփեց ձիու վիզը, որ՝ ինչպէս մի դաւաը, իր Հպարտ գլուխը Հեզ թեքած, կանգնած էր նրա առաջ: Խայկան սղալեց ձիու մետաքսանման բաշը և խնդրեց պահպանել իր սիրելի եղբօրը: Ձին աստիկ խրխընջաց և սկսեց սմբակով Հողը փորել, որը Հէնց կարծէք ասում լինէր, թէ կըպահպանի իր զուարթ արծուին:

Քէկ էլ՝ ինչ որ քայլեր է լսում սանդուխքներից: Այդ հսկայ Խուրշուդն է իջնում: Նրա թրի զանգակահնչիւնն է լսւում: Վերջապէս ահա նա դուրս եկաւ պատշգամբի վրայ:

—Մնաս բարեաւ, քոյրիկս, մնաս բարեաւ, իմ պայծառ աստղ, ասաց հսկայ Խուրշուդը: Իսկ Խայկան դրկելով եղբօրը, օրհնեց նրան, ասելով.

—Աստուած քեզ հետ, աննման եղբայր: Թող նախնամութիւնը օրհնէ քեզ և իր աջը հովանի անէ քո

վրայ։ Թող Նա օրհնէ քեզ յաջող վերջացնել պատերազմը և անվնաս վերադառնալ քոյրերիդ մօտ։ Տխուր ու շատ դժուար է լինելու մեզ համար առանց քեզ։ Դու ես որ կենդանացնում ես մեր օրերը, ինչպէս Հոգին կենդանացնում է մարմինը։ Աշխատիր շուտով վերադառնալ քո խրճիթը, նա առանց քեզ աղօտ է և թախծալից, ինչպէս աշնանային գիշեր, երբ երկնքի վրայ լուսինը չէ վայլում։

Խուրշուդը դարձաւ դէպի Ջուլման։

— Մօտեցիր, դու էլ բարևիր, իմ փայլուն արեղ, և դրկելով քրոջը շարունակեց.—Համբուրիր, ամուր գրկիր ինձ, գուցէ այլևս չտեսնուինք։

Իսկ Ջուլման եղբօրը չպատասխանեց։ Նա հեղեղի պէս առատ արտասուք թափելով յարձակուեց ձիու վրայ և մեռաքսեայ սանձը իր ձեռքերում ամուր բռնեց այն անմիտ յուսով, թէ դրանով կարող է եղբօր ճանապարհը խանգարել։

Խուրշուդը տխուր՝ յօնքերը վրայ էր տուել։ Նա խըղճում էր քրոջը և սպասում էր, որ նա լացը վերջացնի և խայկայի նման ուրախ ու զուարթ ճանապարհէ իրան։ Բայց քաջ երիտասարդը չարժանացաւ այդ բանին, նրա քաղցր քրոջ աչքերը չպարզուեցան։ Օդի մէջ միայն լսվում էր նրա յուսահատ հառաչանքերն ու գանգատախառն ողբը։ Իսկ կատաղի քամին տանում էր դրանց դաշտը, որոնցից նաև երկինքն ընդունեց տխուր կերպարանք։ Ծառերի վրայի տերևները չորացան և գետին ընկան։ Թառամեց և դեղնեց մարգագետինների խոտը։ Խուրշուդի երիվարը սմբակով դոփում էր գետինը և խղճալի ձայնով խրխնջում, աղջկայ յուսահատ աղաղակներից նժոյդը բաց ընկաւ և սլացաւ նետի պէս, տանելով հերոսին դէպի կատաղի պատերազմ։

Խուրշուդը մի անգամ ևս շուռ եկաւ, նայեց քոյրերին, ուղարկելով նրանց իր վերջին բարևը։ Խայկան մէկ-

նեց դէպի նա իր ձեռները և ջերմ աղօթեց եղբօր համար։ Իսկ Ջուլման յուսահատութիւնից ոչինչ չտեսնելով՝ ինքնիրան գետինն էր զարնում և մաղիկ-մաղիկ գալիս։

Այդ օրը մթնեց։ Պայր-մտնող արեգակի կարմիր գոյնը պատեց շրջակայքը։ Խուրշուդի տան դռան առաջ երկու քոյրերը նստած զրոյց էին անում։ Քաջ Խայկան աշխատում էր քրոջը մխիթարել, իր տեսած երազը պատմելով քրոջը։ Խայկան տեսել էր երազում, որ իր սիրելի եղբայրը Թշնամու զօրեղ բանակները ջարդուփշուր էր արել և վառաւոր յաղթութիւնից տուն էր վերադարձել առողջ և ուրախ։ Ցխուր Ջուլման քրոջ խօսակցութիւնը լսելիս զբոսվում էր։ Ցետոյ ինքը Ջուլման ևս պատմեց այն տխուր նախազգացումը, որ իր Հոգու մէջ զգում էր։ Ջուլմային այնպէս էր թւում, թէ բարձր լեռների, գեղեցիկ, ընդարձակ ու կանաչազարդ դաշտերի ետև ծաղիկներով ծածկուած մի գերեզման կայ։ Ջուլմային ասում էր իր սիրտը, որ այնտեղ ամփոփուած է իր քաջ Խուրշուդի մարմինը։

— Քո այդ նախազգացմունքը քեզ խաբել է, պատասխանեց Խայկան և վեր թռաւ այն քարից, որի վրայ նստած էր, և քաղցր ժպիտը երեսին փայլեց։ — Լսում ես, շարունակեց նա, Խուրշուդի նժոյգն է խրխնջում։ Մեր եղբայրը տուն է վերադառնում։

Ջուլման բարձրացրեց գլուխը և ականջ դրեց։

— Իրաւունք ունիս, Խայկա, ասաց Ջուլման, բայց թախծութիւնը դարձեալ նրան չթողեց։

Անտառի մէջի ճանապարհի վրայ երևում էր Խուրշուդի ձին։ Հողմի պէս նա թռչում էր դէպի տուն։ Բայց նրա վրայ չէր երևում Հպարտ ձիավարը՝ քաջ Խուրշուդը, և թամբն էլ շուռ էր եկած։ Երիվարը պատերազմի դաշտից էր սլանում։ Նա բոլորովին շաղախուած էր արիւնով և իր տիրոջ փոխարէն նրա քոյրերին բերում էր թամբի

վրայ մնացած և արիւնով թրջուած ոսկեթել դ ո լ ա մ ը:

Սրընթաց երիվարը տան առաջ կանգ առաւ, ուր երկու քոյր սպասում էին: Նա կատաղաբար սմբակով գետինը սկսեց դոփել:

Ջուլման վայրենաբար ծկլթաց և անզգայ ընկաւ գետնի վրայ: Բայց Խայկան հասկացաւ, թէ ինչու էր այդ հաւատարիմ ձին աղետալի խրխնջում, ինչու նրա սոսկալի խրխնջոցն արտայայտում էր յուսահատութեան և վրէժխնդրութեան աղաղակ: Իսկ երիվարը հէնց շարունակ իր սմբակներով դոփում էր գետինը: Կարծէք նա իր տիրոջ համար դերեզման լինէր փորելիս, որպէսզի ազահ գիշատիչները նրա մարմինը մաս-մաս չանէին:

Խայկան խոր մտածմունքների մէջ ընկղմուած մի քանի րոպէ անշարժ կանգնեց, յետոյ ձեռները կրծքին դնելով դիմեց դէպի ձին.

—Քեզ չյաջողուեց, իմ սիրուն նժոյգ, քո քաջ մէջքի վրայ ամեհի պատերազմից քաջ եղբօրս անվտանգ դուրս բերել:—Հէնց կարծէք ձին հասկացաւ և պատասխանեց սրտաշարժ ու երկար հառաչանքով:

—Մի՛ տրտմիր, շարունակեց Խայկան. քո տրտմութեան պատճառը հասկանում եմ: Դու կարծում ես, ոչ ոք չկայ, որ վրէժխնդիր լինի Խուրշուդի մահուան համար: Այո՛, դու այդ ես կամենում, հասկանում եմ: Եւ այս խօսքերով օրիորդը մի վայրկեան անդամ չկորցնելով՝ մտաւ տուն: Եղբօրը յիշելով նա այլևս չտրտմեց: Քաջ ալբանուհին գիտէր, որ ձին ողբում է այն հերոսի համար, որ իր հոգին աւանդել է ոչ թէ հանգիստ անկողնում, այլ կտրուկ թուրը ձեռին ահեղ պատերազմում: Քաջաբար մեռած հերոսի համար չեն կսկծում:

Առանց երկար մտածելու, Խայկան հագաւ եղբօրը տանը մնացած շորերը, վերառաւ զէնքերից և դատեց երիվարի վրայ: Ձին ուրախ և թռչկոտելով կայծակի պէս

սլացաւ դէպի արիւնահեղ մարտի դաշտը, ուր իր քաջ հերոսը սպանուել էր։

Երիտասարդ ալբանուհին աշխատեց իրան գցել պատերազմի ամենաթաւուղի տեղը։ Ինչպէս կատաղի վոլֆորիկ մի ակնթարթում ալեկոծուած դաշտում երևաց։ Թշնամիները նրա անսխալ հարուածներից խելոյն մեռնում էին արեան մէջ շաղախուած։ Ալբանուհու քնքոյշ աչը անխնայ կոտորում էր թշնամիներին և ուր որ նա երևում էր, ինչպէս մահուան մռայլ հրեշտակ, լսւում էին վիրաւորուածների աղաղակը, և խորտակվում էին թշնամիները։ Բայց միայն խայկակի սրածայր նիզակը չէր որ կոտորածներ էր անում, այլ հէնց նրա մէջ կենդրոնացած էլ կարծես մի կախարդական ոյժ, և թշնամիներից նրանք, որոնք չանգգնում էին նայել գեղեցկուհու հրաշալի երեսին՝ տեղն ու տեղը ընկնում էին մեռած։

Ալբանացիները չարդուփշուր արին թշնամուն, ինչպէս լինում է միշտ, երբ զէնք են բարձրացնում սուրբ գործի—հայրենիքի ազատութեան համար։ Իսկ քաջ ալբանուհին մահաբեր վէրք ստանալով ընկաւ եղբօր գերեզմանի վրայ։ Նա մեռաւ պայծառ ժպիտը երեսին, որովհետև դէպի հայրենիք իր վրայ դրած պարտքը կատարեց։ Խայկան ու խուրշուդը մեռան, իսկ նրանց սուրբ հոգին թռաւ երկնքի հոյակապ օթևանները։ Հայրենիքի ազատութեանն ուրախութիւնով իրանց կեանքը նուիրող քոյր-եղբօրը նախնիները պարգևեց մի ընծայ։ Ժողովուրդը պատմում է, որ նրանց մարմնից բղխեց մի վճիտ և բժշկարար աղբիւր։ Հազարաւոր մերձիմահ և ցաւաբեր հիւանդներ այն ջրից խմելով առողջանում էին և կենդանութիւն ստանում։ Ալբանացիները՝ յիշելով այդ քոյր-եղբօրը, օրհնում էին և վառաբանում նրանց, ինչպէս հերոսների, որոնք ընկան սուրբ գործի համար, ազատելով թշնամու անարգ լծից իրանց քաղցր հայրենիքը. իսկ մա-

նուվիները, իրանց ծնողներից սովորելով, դեռ մատաղ հասակից գիտէին նրանց անուննները։

Բայց քաջ Խուրշուդի աւազ քրոջը — տխրալից Ջուլմային բոլորովին ուրիշ բախտ վիճակուեց։ Նա շարունակ արտասվում էր. նա չտեսաւ և չլսեց, թէ ինչպէս իր քոյրը Խայկան պատերազմում տանջվում էր։ Նրա տխրութիւնը ոչնչով չէր կարելի փարատել։ Նա անմխիթար էր։

Ջուլման եղբօր գերեզմանը գտնելով՝ օրուգիշեր անընդհատ լաց եղաւ։ Նրա խղճալի աղաղակները հողմի շառաչիւնի նման տարածուեցան հեռու դաշտեր։

Գիշերամիջին, ուր ամեն տեղ տիրում էր խորին լռութիւն և մութ երկնքի վրայ փայլում էր լուսինը, Ջուլմայի լացի ձայնը սաստիկ բարձրանում էր։ Նրա աղաղակն ու ողբն այնքան զարհուրելի էին, որ քարերն անգամ կարող էին կենդանանալ և ահից գոռալ։

Այսպէս երկար միջոց տանջվում էր Ջուլման։ Բայց պատմում են, որ մի օր երբ նա սաստիկ լաց ու կոծից անզգայ ընկած էր եղբօր գերեզմանի վրայ, յանկարծ նա կերպարանափոխվում է մշտական լացող կկուի։ Այդժամանակից սկսած նա թռչնի կերպարանքով ամեն տեղ գուժում էր տխրութիւն ու վիշտ իր միակերպ աղաղակով, և թշուառութիւն էր բերում միշտ իր հետ, ինչպէս մի չար կախարդուհի։ Եւ այսպէս Նախախնամութիւնը պատժեց այդ աղջկան, որ չկամենալով զոհուել իր հայրենիքի համար, այլև դեռ անմխիթար ողբում էր այն քաջ եղբօր վրայ, որ զոհեց իրան հայրենիքի ազատութեանը։

ՋԱՐՈՒՀԻ։

ԱՐՁԱԿՈՒՐԻՆ ՎԵՐԴ

ռները բա՛ց, Ասպո պապիս,
Մենք յոդնեցանք ման գալուց,
Ամբողջ ամառ երեք ամիս՝
Խաղ զբօսանք անելուց։

Քաղաքի մէջ ամեն թաղեր
Պտրտեցինք, շատ բան տեսանք.—
Դուրսը դաշտեր և այգիներ՝
Տուին հաճոյք ու մեզ կեանք։

Ոչ շատ հեռու՝ սարի ծայրին,
Աւեր ընկած բերդի մէջ՝
Մի վանք ունինք յանուն Փրկչին,
Այնտեղ եղանք ամռան վերջ։

Ուխտ, զոհ, աղօթք խնկանուէր,
Պար բոլորած, երգ ու նուագ՝
Սիրով կապեց մեր սրտեր,
Անցաւ ուրախ ժամանակ։

Հովն ընկաւ արդ, սովրիլ կուզենք,
Եկէ՛ք, գրքեր և ուսուցիչ.
ԴիՀ, ընկերներ, շուտ ժողովուենք,
Առնենք թանաք, թուղթ ու գրիչ։

Եկէք, որդիք, ասաց պապին,
Լայն բացել եմ դռները.
Մաքուր, պայծառ ու կարգին՝
Սարքել եմ սեղանները։

Ջանգն աւելի բարձր եմ կախել,
Պինդ և երկար պիտ՝ զարնեմ.
Պէտք չէ թողեմ մէկին քնել,
Ամենք դպրոց թող դիմեն։

Եկէք բարով, հազար բարի,
Ով ժէր լինի ինն ամիս,
Ուրախ ամառ իւր կանցնի,
Ձերևայ ծոյլն իմ աչքիս։

Առաւօտեան դպրոց եկէք՝
Ոչ շուտ, ոչ ուշ, ժամանակին.
Դասն ու խաղը կարգի դրէք,
Որ չամաչէք զարունքին։

ԽԱՉԻԿ.



ՄՈՒՖԼՈՒ

ԱՆԴԼԻԱԿԱՆ ԶՐՈՅՑ

(Ոչեդայից)

(Շարունակութիւն և վերջ)

սակայն Լօլօն հիւանդացած էր և դառնացում էր: Քանի անգամ նա վեր կացաւ անկողնից և կամենում էր գնալ Մուֆլուի մօտ, քանի անգամին էլ մայրը, քոյրերն ու եղբայրները պառկեցնում և հանդըստացնում էին նրան:

Խեղճ երեխան վշտից ինքնիրան կորցրել էր: «Մուֆլո՛ւ, Մուֆլո՛ւ», գոչում աղաղակում էր նա, իսկ դիշերն առաւել և իսում էր երազում. և երբ մայրը վախից գնաց բժիշկ կանչելու ու բերեց, բժիշկը շարժեց գլուխը և մի բան ասաց ջղերի շարժման մասին:

Երկու օրից Տասօն տեսնելով, որ այսպիսի կեանքին տանել չի կարող, գնաց Հիւբանոց, ուր իջել էր անդղիացին: Նա կամենում էր իմնդրել, արդեօք թոյլ չի՞ տալ գոնէ կէս ժամով առնել Մուֆլուին, որպէսզի հանդստացնէ իր վոքրիկ եղբօրը: Բայց Հիւբանոցում ասացին, թէ անդղիացի մլլորդը, որ գնել էր շունը Ռօզինա Կալաբուչչիից, գնաց նոյն օրը երեկոյեան, և յայտնի չէ թէ ինչտեղ՝ Հռովմ, Պալերմօ, թէ Նէապօլ:

—Նրա հետ էլ Մուֆլո՞ւն, հարցրեց Տասօն:

—Շունը, որ նա դնել էր, նրանց հետ գնաց, պատասխանեց Ֆառան:—Ա՛յ թէ շուն էր նա էլ. ողջ օրը

ուռնում էր ու հաչում. դռների վրայից բոլոր ներկը քերել հանել է, աշխատում էր մի կերպ դուրս պրծնել։

Խեղճ Մուֆլու։ Տասօյի սիրտը պղտորուեց, երբ լսեց շան տխրելն ու տրտմելը։

—Էհ, ինչ մեծ բան է, քարկացայտ պատասխանեց մայրը, երբ Տասօն յայտնեց նրան եղելութիւնը։ Ձուևնը, շուևնը... նա էլի այն շուևն է։ Նրան առաւել լաւ կրկերակրեն քան մենք. ճշմարիտ, երկու շաբաթից նա բոլորը կրմոռանայ...։

Բայց Տասօն հաւատացած էր, որ ոչ Մուֆլուն կրմոռանայ, ոչ էլ Լօլօն։ Բժիշկն այցելում էր իր հիւանդին օրը երկու անգամ և հրամայում էր երեխայի տաք գլխին սառոյց դնել և տաք ջուր ածել։ Լօլօն մեծաւ մասամբ պառկած էր անշարժ, և միայն ժամանակ առ ժամանակ աղաղակում էր և կանչում Մուֆլուին։

—Մի՛թէ դուք չէք կարող ճարել նրա համար այն, ինչ որ նա կամենում է, ոլսէցոլի հանգարտեցնենք նրան, հարցրեց բժիշկը։

—Ոչ, այդ անկարելի է, և թշուառ Լօզինան ճաճանչեց երեսը գոգնոցով, իբրև մեղաւոր համարելով։

—Բայց գոնէ դու դինուոր չես դնալ, ասում էր նա Տասօյին, աշխատելով գոնեա սրանով մխիթարել իրան։ Ա՛խ, Տասօ, մի՛թէ դու չարժես շանը։

—Իսկ Լօլօյի կեանքին, տխուր արտասանեց Տասօն...։

Մայրը այնքան դրգռուած ու վրդովուած էր, որ նրան այնքան էր տանջում իր խղճը, որ անելիքը չէր իմանում։

—Լօլօն միշտ լիմար է եղել. նա մտածում էր միայն կամ եկեղեցու, կամ շան և կամ ճաղիկների վրայ, —բարկութիւնով պատասխանեց մայրը. —ես նրան շատ եմ երես տուել, որովհետև նրա ոտը փչացած է, և ահա, և ահա...։ Եւ խեղճ ողորմելին սկսեց լալ, արտասուքը կերա-

կրի մէջ թափելով. վերածեց նաև կերակուրը ածուխի վրայ, այրուեց աւելը, կայրուէր և նրա ձեռքերը, թէ այնտեղ չլինէր Տաւոն:

—Ամեն բանում դու իմ օգնականն ու. նեցուկն ես: Ո՞վ էր անել այն, ինչ որ ես եմ արել, հեկեկալով ասում էր խեղճ կինը:

Սակայն այս բոլորը դեռ չառողջացրին Լօլօյին: Աշնան դեղին օրերն ու շաբաթներն անցան, բայց Լօլօն կրկին վտանգի մէջ էր: Փոքրիկ, խեղդուկ օդ ունեցող սենեակը, ինչտեղ նա քնում էր Սանդրօյի, Բիչայի և Տաւոյի հետ, բոլորովին չէր նպաստում նրա լաւանալուն: Տաւոն տրրտում սրտով դնաց պարտէզ իր դորձին. ծաղիկներն ու ծառերը նորից ծաղկել էին: Բարի պատանին բոլորովին յոյս չունէր, որ Լօլօն կրլաւանայ, և ասես թէ իրան էր համարում իր փոքրիկ եղբօր սպանողը:

Արդարև, թէպէտ Մուֆլուին ծախելու ժամանակ նա չկար, բայց չէ՞ որ Մուֆլուն նրա պատճառով ծախուեց: Այդ պատճառով նա իրան թշուառ էր համարում՝ որպէս մեղաւոր և անարժան այն զոհին, որ նրա համար արել են:

Յայտնի բան է, ուրախալի երևոյթ էր, որ նա ազատուած էր զինուորական ծառայութիւնից և կարող էր շարունակել իր օգտաւէտ աշխատութիւնը, յոյս ունենալով, ինչպէս խոստացել էին, որ ռոճիկը կըշատացնեն, խաղաղ կապրէր իր ընտանիքի հետ, և կարող կըլինէր երբևիցէ պսակուել գեղատեսիլ և շիկահեր Բիօնդինայի՝ իրանց հրապարակի վրայ դտնուող սափրիչի աղջկայ վրայ: Այդ թէպէտև ուրախալի էր, բայց խեղճ Մուֆլուն... խեղճ, ողորմելի Լօլօն...: Տաւոյին այնպէս էր թւում, որ նա իր ազատութիւնը դնել է իր փոքրիկ եղբօր և շան դնովը:

Բայց ինչտե՞ղ էր խեղճ Մուֆլուն: Նրան տարել են

հարաւ, խեղդուվ, կեղտոտ և գարշահոտ շոգեկառքով։

— Եթէ նա տեսնէր այն շանը, որի համար նա այնքան տխրում է, անշուշտ կըփրկուէր, կըլաւանար, ասաց բժիշկը։

Բայց այս ոչ ոք չէր կարող կատարել։ Ոչ ոք չգիտէր թէ ինչտեղ է Մուֆլուն։ Նա գուցէ Անգղիայում է, գուցէ Ֆրանսիայում, գուցէ Ամերիկայում,—ինչպէս իմանան։ Նրանք չգիտէին, ինչտեղ է գնացել նրա գնողը։ Մուֆլուն, շատ կարելի է, կենդանի էլ չէ։

Խեղճ մայրը, լսելով բժշկի ասածը, յետ դարձաւ, և նայելով փողի վրայ, որ առաջ նրա համար հրեշտակ էր.

— Ինչո՞ւ համար, դուք, սատանայի բերկրանք, ինձ մոլորեցրիք։ Ես վաճառեցի խեղճ, անմեղ, հաւատարիմ անասունին, որպէսզի ձեզ ձեռք բերեմ, իսկ այժմ որդիս մեռնում է։

Մօր մեծ որդին, ճիշտ է տանը կըմնայ, բայց ինչ կըլինի, եթէ վոքրիկ, կաղ երեխան մեռնի։ Ոսզինա Կալաբուչչին պատրաստ էր տալ իր ունեցած բոլոր փողը, և իր կեանքումը հինգ ֆրանկից անգամ պրկուած լինել, միայն թէ կարող լինի վերադարձնել անցած ժամանակը, երբ կար Մուֆլուն և երբ նրա վոքրիկ տէրը վազվզում էր նրա ետևից արեգակի տակ։

Մի ամսից աւելի անցաւ, բայց Լօլօն դարձեալ միևնոյն դրութեան մէջ էր՝ կարճ խուզած գեղին մազերով, լայն բացած անմիտ աչերով։ Նրա կեանքը կախուած էր մի դրզալ կաթից, մի կտոր սառցից և կլտորնաջրից, նա անդադար արտասանում էր. «Մուֆլո՛ւ, Մուֆլո՛ւ, ա՛ւր է Մուֆլուն»։ Նա պառկած էր առանց ուշքի, տաք էր գլուխը, իսկ կուրծքը լի էր վշտով։ Բարի հարևանները նրա համար մրգեր էին բերում, նստում նրա մօտ, բայց այնքան շատ էին խօսում, որ հէնց միայն դրանով էլ կարող էին սպանել նրան։ Եւ այդ յիմար սովորութիւնով նրանք այն-

պէս էին կարծում թէ լաւութիւն են անում։ Իսկ Լօլօն կարծես թէ ոչ ոքի չէր նկատում, ոչ ոքի չէր լսում, բժիշկը շատ հասարակ կերպով ու պարզ ասաց Իօզինային, թէ որդիդ պիտի մեռնի։

Մեռնի՜, քանի որ եկեղեցին այնպէս մօտ էր։ Նա չէր կամենում հաւատալ բժշկի ասածին։ Մինթէ ս. Մարկոսը և ս. Գէորգը և ուրիշները, որոնց նա այդքան սիրում էր, ոչինչ չէին կարող անել նրա համար։

— Ո՛չ, ասում էր բժիշկը, — միայն շունը կարող է օգնել նրան, որովհետև որդուդ միտքը զբաղուած է նրանով։ Իսկ շունը դուք վաճառել էք։

— Այո՛, ես վաճառել եմ, պատասխանեց մայրը արտասուելով։

Վախճանն արագ-արագ մօտենում էր։ Իրլիգնապահին քահանան դուրս եկաւ եկեղեցու մեծ դռներից երեխայի հետ, որ գալիս էր առաջինը և մի զանգակ բռնած՝ զանգահարում էր. անցաւ հրապարակը, մուտ սանդուխքներով բարձրացաւ դէպի Իօզինայի սենեակները և անցնելով երեխաների մօտից, եկաւ Լօլօյի մահճի մօտ։ Լօլօն պառկած էր առանց ուշքի։ Քահանան մեռոնով նրա ճակատն օծեց, և սկսեց գլխակոր տխուր աղօթել նրա վրայ։ Քահանան կատարում էր իր պարտականութիւնը։

Խորին լռութիւն էր տիրում. երբ քահանան ձայնը կտրեց, - լսելի եղաւ միայն մօր և իր եղբայրների ողբն ու կոծը, որոնք ծնկաչոք էին։ Յանկարծ մի տարօրինակ աղմուկ ու թրխթրխկոց լսուեց սանդուխքների վրայ, և խոյն շտապով աղօթողների մէջից վազեց կեղտոտ, թոզակոլոլ Մուֆլուն և թռաւ մահճի վրայ։ Լօլօն բարձրացրեց իր ծանր արտևանունքը և նրա աչքերում փայլեց ուրախութիւն։

«Մուֆլո՛ւ», հազիւ լսելի ձայնով արտասանեց նա. շունը պառկեց նրա լանջի վրայ և սկսեց լիզել նրա երեսը։

Մուֆլուն վերադարձաւ տուն։

Լօլօն նոյնպէս վերադարձաւ, որովհետեւ մահը բաց թողեց նրան իր ձեռքից։ Կամաց-կամաց, սակաւ առ սակաւ, համարեա աննկատելի կերպով, փոքրիկ ու թշուառ մարմինը կեանք ստացաւ, իսկ փոքրիկ ու տանջուած դէլուխը՝ խելք։ Մուֆլուն եղաւ Լօլօյի բժիշկը։ Մուֆլուն, որի կմախքը ծածկում էր խճուճ բուրդը, ոչ մի րոպէ չէր հեռանում նրանից, և ողջ օրերով նայում էր նրա վրայ իր մեծ-մեծ, սև ու սիրալիր աչերով։

Լօլօն երջանիկ էր. նա ոչ մի հարց չէր առաջարկում. նա շատ թոյլ էր։ Մուֆլուն նրա մօտ էր, և նա աւելի ոչինչ չէր կամենում։ Աւազ, այս քիչ էր մեծերի համար, թէպէտև նրանք վախենում էին մտածել սրա վրայ։ Պայլն ու Տասօն դիտէին, որ շունը ծախուած է և վճարը ստացուած, որ նրա վրայ այլևս իրաւունք չունին, և շատ հաւանական է, որ շան նոր տէրը յետ կըպահանջէ նրան։ Եւ եթէ շանը տանեն, այդ ինչպէ՞ս պիտի տանի Լօլօն. նա՝ որ այնքան թոյլ էր, որ մի թռչնից անգամ ծանր չէր։

Մուֆլուն, անկասկած, երկար ճանապարհորդութիւն է արել և քիչ զրկանքներ կրած չի լինիլ։ Նրա կաշին ու ոսկորներն էին մնացել։ Նրա մարմնի վրայ երևում էին հարուածների ու պատիժների հետքեր, նրա մետաքսանման մազերը բոլորովին խճճուած էին. երևում էր որ նա հեռու տեղից է եկել։ Նրա տէրը, անշուշտ, վաղ թէ ուշ պիտի պահանջէ։ Եւ եթէ նրանք իրանց կամքով չտան, այնժամանակ օրէնքով կըստիպեն տալ։ Ռոզինա կալաբուչչին ու Տասօն, որ երեխաների առաջ չէին համարձակվում խօսել դրա վրայ, սակայն ամեն րոպէ մտածում էին և ամեն երեկոյ Տասօն դորձից վերադառնալով նախ և առաջ հարցնում էր. «Ոչ ոք չէ՞ եկել Մուֆլուի ետևից»։ Անցկացաւ տասը օր, և նրանց երկիւղը փոքր ինչ անցաւ։

Մուֆլուի եկած տասնումէկերորդ օրը տօն էր, ուստի Տասօն դործի չգնաց։ Այդ օրը մի մարդ եկաւ, որ երեսով շատ նման էր օտարականին, և ասաց այն սարսափելի խօսքերը, որոնցից նրանք շատ էին վախենում։

—Ցետ չէ՞ եկել ձեր շունը, որին դուք վաճառել էք մի անգղիացու վրայ։

—Այո՛, եկել է։ Անգղիացին պահանջում է նրան։

Ֆառան պատմեց, որ շունը փախել է Հռովմից։ Ամեն տեղ նրան որոնել են, բայց իզուր։ Վերջապէս պարոնը մտածել է, թէ շունը անշուշտ գնացել է իր նախկին տիրոջ մօտ. ուստիև ուղարկեց ինձ իմանալու։ Ինքը միլորդը վերադարձել է։ Ցետոյ Ֆառան Հանեց դրպանից մի շղթայ և յայտնեց, որ նրան հրամայուած է անյապաղ առնել շանը։ Փոքրիկ ու հիւանդ անգղիացին շատ է ցաւում իր շան համար։

Տասօն լսում էր բոլորը կատարեալ յուսահատութիւնով. վերադարձնել Մուֆլուին՝ նշանակում է սպանել Լօլօյին,— Լօլօյին, որ այնպէս ագահութիւնով դիտում էր Մուֆլուի իւրաքանչիւր շարժուածքին։ Երբեմն-երբեմն միայն Հանդարտ ժպտում էր և բաներ ասում Մուֆլուի ականջին։

—Շունը վերադարձել է տուն, ասաց Տասօն հազիւ լսելի ձայնով,—Հռովմից։ Հեշտ է ասելը՝ Հռովմից։ Անբան արարած է։ Ես ճշմարիտ եմ ասում, շունը այստեղ է, միթէ դուք ինձ չէք հաւատում։ Ես կրգնամ տիրոջդ մօտ, և կրկնդրեմ որ առժամանակ շանը թողնի մեզ մօտ։ Իմ փոքրիկ եղբայրս սաստիկ հիւանդ է նրա պատճառով։

Այլևս նա խօսել չկարողացաւ—արտասուքը խեղդում էին նրան։ Ֆառան յայտնեց իր համակրութիւնը, միայն թէ Տասօն անպատճառ գնայ իր տիրոջը մօտ, իսկ ինքը մնայ նրանց տանը, որպէսզի Մուֆլուին չտանեն ուրիշ տեղ և չթաքցնեն։ «Ձան համար վճարել են հազար ֆրանկ, աւելացրեց Ֆառան, և եթէ նա Հռովմից դեռ

է ճանապարհը, նշանակում է խելօք շուն է»: Տասօն շնորհակալութիւն արաւ նրանից. և միանգամայն զոհ լինելով, որ մայրը տանը չէր և չէր կարող վիճել նրա հետ, առաւ արկղից տասը հարիւր-ֆրանկանոց թղթադրամները, գրպանը դրեց և դուրս եկաւ փողոց: Նա հասարակ բանուոր էր,— նա վճռեց անձնուիրութիւն գործել: Գնաց ուղղակի դէպի այն հիւրանոց, ուր իջել էր անգղիացի մլորդը, և հասնելով այնտեղ՝ յիշեց, որ չգիտէ անգղիացի մլորդի ազգանունը: Հիւրանոցի սպասաւորը ճանաչեց նրան, և իմանալով թէ ինչ է նրա գալու պատճառը, գնաց յայտնելու: Անգղիացուն Տասօն կէս ժամից աւելի էր որ սպասում էր, և նրա սիրտը, որի վրայ դրած էր հարիւր-ֆրանկանոց թղթադրամների ծրարը, ճմլվում ու սեղմվում էր: Վերջապէս նրան վերև կանչեցին, և այնտեղ նա տեսաւ օտարականին՝ որի դէմքը շատ հաճելի էր, մի դեղեցիկ տիկնոջ և մի թուլակազմ երեխայինն՝ որ պառկած էր:

—Մուֆլուն, ո՞ւր է Մուֆլուն, բացականչեց երեխան, երբոր Տասօն ներս մտաւ: Տասօն գլխակը վերցրեց և կանգնեց դռան շեմքում: Նրա երեսն արևից այրուած էր, առոյգ և դեղեցիկ պատանի էր, հագին ունէր կապտագոյն կոպիտ բլիւզ:

—Թոյլ տուէք յայտնեմ Ձերդ պայծառութեան, ասաց նա,—որ խեղճուկ Մուֆլուն տուն է վերադարձել:

Երեխան բացականչեց ուրախութիւնից, իսկ պարոնն ու տիրուհին — զարմանքից:

—Տո՞ւն է վերադարձել: Հռովմից:

—Այո՛, Ձերդ պայծառութիւն, պատասխանեց Տասօն, վոքը ինչ սիրտ առնելով. իսկ ես եկել եմ ձեզ մօտ խնդիրքով: Մենք շատ չքաւոր ենք. իմ հանած վիճակն էլ վատը դուրս եկաւ. ուստի մայրս ծախեց շունը, յոյս ունենալով իմ վոխանրէն ուղարկել մի այլ կամաւոր գնացողի,

բայց այդ մասին ես ոչինչ չգիտէի։ Իմ փոքրիկ եղբայրը Լօլօն՝ այն երեխան, որին դուք տեսել էիք շան հետ, շանը կարօտելուց հիւանդացաւ, և ողջ ամիս ուրիշ բան չասաց, այլ միայն՝ «Մուֆլո՛ւ, Մուֆլո՛ւ»։ Յոյս չունէինք թէ նա կառողջնայ. քահանայ եկաւ հաղորդ տուեց։ Եւ մէկ էլ՝ անսպասելի կերպով ներս է վազում Մուֆլուն՝ որի կաշին ու ոսկորներն էին մնացել, բոլորովին կեղտոտ, թոզում կորած։ Նրան տեսնելով՝ Լօլօն լսկոյն լրան եկաւ, և ահա դրանից յետոյ անցել է արդէն տասը օր, և թէպէտ Լօլօն այնպէս թոյլ է, ինչպէս մի նորածին մանուկ, բայց դարձեալ նա սկսաւ ամեն բան հասկանալ և ուտել, ինչ որ տալիս են նրան, և միշտ պառկած նայում է Մուֆլուի վրայ, և ժպտում է ու միայն այս ասում. «Մուֆլո՛ւ, իմ Մուֆլո՛ւ»։ Ես լաւ գիտեմ, Ձերդ պայծառութիւն, որ դուք դնել էք շունը, և օրկնքը ձեր կողմն է, որով դուք կարող էք յետ առնել. բայց ես համարձակում եմ կարծել, որովհետև Լօլօն շանը շատ է սիրում, թէ դուք կըթողնէք նրան մեզ մօտ և յետ կըստանաք ձեր հազար ֆրանկը։

Այս բոլորը Տասօն ասաց առանց ընդհատելու և միակերպ, և հանելով գրպանից փողը, համեստաբար մեկնեց օտարականին, որ անխօս կանգնած էր և յետ քաշուեց փողերից։

—Հասկացայ՛ր, Վիքթօր, ասաց նա վերջապէս որդուն։

Երեխան ծածկեց երեսը բարձով։

— Այո՛, փոքր ինչ հասկացայ, թո՛ղ մնայ Լօլօյի մօտ, Մուֆլուն ինձ հետ երջանիկ չէր։

Այս ասելով՝ երեխան լայ եղաւ։

Մուֆլուն նրանից փախել է։

Մուֆլուն նրան երբէք չսիրեց, թէպէտ նա նրան միշտ փաղաքշում էր և քաղցրեղէն էր տալիս։

Մուֆլուն փախել է նրանից և անցել երկու հարիւր

մղոն տարածութիւն, թէ ինչ է գնայ դտնէ այն երեխաներին և մնայ նրանց մօտ. նրանց, որոնք ինքեանք ուտելու բան չունեին, և հետևաբար, շանը չեն կարող լաւ կերակրել: Խեղճ փոքրիկ երեխան և՛ հարուստ էր և՛ անուանի, բայց չկարողացաւ Մուֆլուի սիրտը գրաւել: Տաոն չհասկանալով, թէ ինչ են խօսում, փողը դրեց սեղանի վրայ:

—Բարեհաճեցէք, Ձերդ պայծառութիւն, յետ առնել փողը և վերադարձնել ինձ մօրս տուած ստորագրութիւնը Մուֆլուի վաճառման մասին, համեստօրէն շարունակեց նա, —ես դիշեր-ցերեկ կաղօթեմ ձեզ համար, Լօլօն էլ նոյնպէս կաղօթէ. իսկ ինչ վերաբերում է շանը, մենք կրպահենք նրա լակոտին, կրմեծացնենք փոքրիկ պարոնի համար:

Տաոն, որի ճարտարախօսութիւնը բոլորովին հատաւ, սրբեց ձեռքերով թաց աչքերը:

Անգղիացու սիրտը շարժուեց:

—Խնդճ հաւատարիմ շուն, ասաց նա հոգոց հանելով: Ես վախենում եմ նրա հետ վատ լինինք վարուած, թէպէտ նրա լաւն էինք կամենում: Չէ, մենք նրան յետ չենք պահանջիլ, և չեմ կարծում, որ դուք ստիպուած լինիք վնուազ գնալու. դուք, ինչպէս երևում է, ծղնիւ պատանի էք և պիտանի ձեր մօրը: Թողէք ձեզ մօտ փողը, բայց պահեցէք նրա լակոտը, որի մասին դուք առացիք, թէ կրմեծացնէք իմ փոքրիկ որդու համար: Վաղը ես կրգամ այցելելու ձեր մօրը և Լօլօյին: - Հեռվմից է եկել Մուֆլուն, ինչ զարմանալի հասկացողութիւն և աննման հաւատարմութիւն:

Այժմ, անկասկած, դուք էլ կրհասկանաք, փոքրիկ ընթերցողներ, թէ Մուֆլուի տէրերն ինչպէս ուրախացան, երբ Տաոն վերադարձաւ բարի համբաւով: Նրա տեղն իսկոյն վարձեցին կամաւոր գինուոր գնացողին, և Լօլօն սկսեց նշմարելի կերպով լաւանալ: Ինչ վերաբերում է

Մուֆլուին, նա, յայտնի բան է, երբէք չէր կարող պատմել իր տիրոջը այն զրկանքների, թշուառութիւնների, անցքերի և վտանգների մասին, որոնք պատահել էին իրա հետ։ Նա չէր կարող պատմել թէ որպիսի հրաշքով գտաւ Հռովմից մինչև Ֆլօրենցիա տանող այդ երկար ու ձիգ ճանապարհը։ Մուֆլուն, որ օտարների մօտ այնպէս տգեղացել էր, իր տուն վերադառնալով՝ կարճ միջոցում գիրացաւ, գուարթացաւ, իսկ Լօլօն առաջուանից աւելի էս սիրեց։

Ձմեռը ողջ ընտանիքով գնացին Ամերանոց Սպեցիայի մօտ, որտեղ կալուածք ունէր անգղիացի միլորդը, և այնտեղ Մուֆլուն առաւել էս լաւացաւ։ Փոքրիկ անգղիացին բոլորովին կազդուրուեց սքանչելի օդի ազդեցութիւնից։ Նա ու Լօլօն սերտ բարեկամ դարձան, և խաղում էին Մուֆլուի ու նրա լակոտի հետ ողջ օրերով նարնջենիներու տակ։ Այժմ Տասօն էս շատ դոհ էր։ Լօլօն՝ որ հաշմ լինելով ազատ էր զինուորութիւնից, կամեցաւ ծաղկասան լինել, այն էլ երևելի, երևելի՛ ծաղկասան։ Բայց նախ և առաջ նա կարդալ սովորեց։

— Ես դու, Մուֆլու, ինչպէս գտար ճանապարհը,— համարեա շաբաթը հարիւր անգամ հարցնում էր Լօլօն։

Արդարև ինչպէս...։

Ռէթի։



ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ԶԱՆԱԶԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.







ԲՈԼՈՒՄԲՈՍ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՑՈՒԻԼԸ

ՆԱԽԱԶԱՒԻՂ։

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՐԻԿԱ ԱՇԽԱՐՀԻ

ՎՐԱՑՕՐ։

դդերի հռչակաւոր գաղթականութեան դարեբում դերմանական ցեղի եկւորները ուզում էին անցնել Նբրոպայի բոլորովին հիւսիսային կողմերը. բայց անբարեհաճ բնութեան խստաշունչ կլիման կոտրեց նրանց ձգտումը նոր երկրում բնակելու. ահագին ամբերով կրկին չետ դարձան դէպի հարաւ, նեղելով Ճանապարհին կէլտերին և սլաւօններին՝ յղուեցան ամբողջ արդի Գերմանիան մինչև Ալպեան սարերը։

Սակայն նրանց տոհմակիցներից չատերը հիմնաւոր բնակութիւն հաստատեցին հիւսիսում՝ Սկանդինաւ կոչուած տեղը, ուր մի քանի դարեր նրանք չատ պատերազմներ վարելուց չետոյ, կազմեցին այս երեք տէրութիւնները. Դանեմարք, Շվեդա, և Նորվէժ։

Նորմաննները (հիւսիսի մարդիկը) ոչ մի կերպ չէին կարողանում կրթուիլ խնամ օրէնքներին ընկճուելու, որովհետև նրանք արդէն շատ երկար ժամանակ ապրել էին ազատ, ազատութիւնը միայն մարմնական ոյժի և անճնելը քաջութեան մէջ տեսնելով։ Այլ չանկարծ Ճնշումները սկսուեցան, երևան եկան ոսկևկանները, դրուեցան կարգ ու կանոնները, որոնց սկսած էր լուրաքանչիւր մարդ հնազանդէր՝ երկիւղ կրելով մահուան պատժից։ Այդ բանը դուր չեկաւ ըմբոստ նորմաններին. չատերը վեր առան իրանց երեխաները, կիները, անասուննները, դէնքերը, չմոռացան մինչև իսկ առնել մի բուռ իրանց պապենի «Թոռ ասածու» բագնի զոհական հողից, կազմեցին երկար նաւեր, և լող տուին անծանօթ ծովի վրայով՝ դէպի Արևմուտք։ Կողմնացոյց ի հարկէ նրանք չունէին. քամին ձգեց նրանց մի կղզի, որ աւելի սրժևեմ կեր-

պատանք ունէը քան Թէ երանց Թողած երկրորդ հայրենիքը, որովհետև սառցակոյտերը շրջապատում էին նրան գրեթէ ամեն կողմից։ Այդ է պատճառը որ վերաբնակ-գաղթականներն այդ կղզուն Իսլանդ անունը տուին։ Բայց Իսլանդացի ներսն այնքան նեմ չէը՝ ինչքան այդ երևում էը հեռուից։ Նա ծածկուած էը անտառներով, եղանակն աւելի բարեխառն էը քան Սկանդինաւում և հողն աւելի բարերեր։

Նորմաններն իսկոյն ձեռք զարկին մշակել գետինը, պահել ընտանի կենդանիները և կապրէին բարելի կեանքով, եԹէ վայրենական հէնաբարոյ արշաւասիրուԹիւնը չգրաւէը նրանց հանապազ դէպի ծովը։ Եւ Թէև կողմերը չէին ընկնում այդ «Ծովային արքաները» կամ «վիկինգները»։ Նրանց «դրակոնները», այսինքն երկար ու անծածկ նաւակներն ամեն տեղ սարսափ էին ձգում, ուր որ երևում էին։ Սակայն պատմական տարեգիրներից մենք գիտենք, որ այդ յանդուգն հէնները միշտ աւերած և կողոպտումնք չէին բերում երանց հետ. օրինակ՝ նրանք եղան՝ տպագայում՝ երեք հզոր տէրուԹիւնների հիմնադիրները։ 862 Թուին Րիւրիկը իր ընկերներով եկաւ գլուխ Ռուսաց ԹագաւորուԹեան, Ռօբերը Հիսկարը նուաճեց Ներքին Իտալիան, և Վիլհելմ Նորմանը իր իշխանուԹեան Ներքոյ ձգեց Անգլիան։

Իսլանդացի գաղԹականների հետ սկսեցին միանալ շատ եկւորները Նորվեժից և Շվեդացից։ Մարդկանց համար նեղուացքուԹիւն եղաւ, մէջները կռիւ ընկաւ։ Նրանք, որոնք պղտել էին այդ գահուվէճից՝ ուզում էին աւելի հեռի տեղ գնալ, դարձեալ կագմեցին երկար նաւակները և կարճնեին մի քանի Հուննիբեռնի առաջնորդուԹիւնով 882 Թուին ձանապարհուեց դէպի արևմուտք, ուր ակամայ դիմում էին բոլոր ծովագնացները։ ՓոԹորիկն այնքան հեռու տարաւ նրանց, որ կորան ջրերի վրայ. յետ դարձան, բայց էլի Իսլանդացի և Հրենլանդացի միջաերը կարողացան մի բաւական մեծ ցամաք նկատել։ Տուն հասնելով նրանք պատմեցին իրանց հայրենակիցներին։ Բաւական հիմնաւոր կըլինի ասել, որ Հուննիբեռն է եղել առաջին եւրոպացին, որին Ամերիկան նայել է «ծովային ալիքների աղջամուղջից»։ Անցաւ դրանցից յետոյ մի ամբողջ դար, յանկարծ յայտնուեց էլի մի համարձակ Նորման-Իսլանդացի, կարմիր Էրիկ ա-

նունով, որ մաքուռը դրաւ վերձնել՝ լմանալու համար՝ թէ Աշմարիտ Հոննելբեռնը կը ուղեկցներով տեսել էին մի նոր երկիր։ Այդ մեծոցին հասարակաց դատաստանը վճռեց նրան եռամեայ աքսորի՝ արիւնահեղ կռիւ անելու համար կը հարևանի հետ։ Երկիր չլմանալով ենչպէս կատարել նշանակած պատիժը՝ չկնեց «դրախտն» ու ընկաւ ծովի մէջ։ Երեք ամառ և երեք ձմեռ թափառեց նա մոլորուած՝ ծովերի վրայ, վերջապէս, հասաւ ցանկացածին, դիպաւ մի ցամաքի, ծանկուած այնպիսի ճոխ բուսականութիւնով, որ Երկիր նրան անուանեց «Կանաչ աշխարհ»։ Նա կարծում էր որ այդ անունն վրայ կրգան կը երկրացիները։

Երկիր չսխալուեց. աքսորի ժամանակը լրանալուց յետոյ դարձաւ կը հայրենիք, և մինչև մի տարին նա սկսեց պատրաստութիւն տեսնել յետ դառնալու, բայց այս անգամ նա մենակ չէր, շատերը հետամուտ էին նրա հետ գնալու։ 14 նաւակները լիքը մարգկկներով, անասուններով, բեռնած ամեն տեսակ կահ-կարասիքով՝ գնում էին նրա յետևից դէպի նոր բացուած երկիրը։ Այնտեղ հաստատեցին ծաղկեալ գաղթականութիւն, որ գոյութիւն ունէր մինչև տասնեւչորրորդ դարը։ Բանը դրանով չվերջացաւ. Երկիր ուղևորներից մէկին որդին՝ եռանդուն մի երիտասարդ Բիէօռն անունով՝ ամեն տարի կը սեպհական երկար նաւով ընկնում էր դէպի հեռու ծովերի գանագան կողմերն առևտուր կամ հետազոտութիւն անելու և մի շատ տուն էր գալիս հարուստ ապրանքով։ 1000 Թուականին՝ ձմեռը՝ չանկարծ նա լմանում է, որ իր հայրը Երկիր հետ գնացել է մի գեղեցիկ «կանաչ աշխարհ», որ սառցակոյտերով պատած է։ Երկար չխորհելով արի ծովագնացն իսկոյն յուղի ընկաւ հօրը գտնելու։ Նրա նաւը մի քանի օր շարունակ լողում էր անսահման ծովի վրայով, վերջապէս երևաց մի անծանօթ երկիր, բայց սառցով պատած չէր, Բիէօռնը մտածեց որ իր հայրն այդ տեղ չէ և «կանաչ աշխարհը»՝ Հրելանդան, պէտք է աւելի դէպի հիւսիս լինի։ Նա պատեց այդ ցամաքի վերի մասը, որ մի քանի դարեր յետոյ ստացաւ «Նոր-Շոտլանդա» անունը, անցաւ Նեիւ-Ֆաունդլէնդ և Լաբրադօր ու յաջողութիւնով հասաւ հարաւային Հրենլանդա։

Եթէ այս վերջինը Ամերիկայի մաս ընդունել՝ էլ տարա-

կոյս չկայ, որ Բլէօռն է առաջին եւրոպացին, որ բացաւ Ա. մերիկան 500 տարի Քոլումբոսից առաջ։ Բլէօռնի տուն բերած համբաւը՝ նրանց կղզուց դէպի հարաւարեւմուտք գտնուած անծանօթ երկրի մասին, մեծ նշանակութիւն ձգեց գաղթականների մէջ։ Նրանից՝ «կանաչ աշխարհի»՝ Նահապետի երէց որդին՝ Լէյֆ անունով գնեց Բլէօռնից նրա «երկար նաւը» և 35 ընկերներով գնաց որոնման։ Բաւական յաջողութիւնով հասնելով մինչև Նեւֆաունդլենդ՝ Լէյֆը միլուեց դրան «վհմական աշխարհ» անունով, որովհետև նոյն տեղը լիքն էր ահագին սալաքարերով. յետոյ նա իջաւ մի տափարակ ափի վրայ, որ ծածկուած էր թանձր ծմակով, դրան էլ անուանեց «անտառների աշխարհ»։ Այդ էր այժմու Նորշոտլանդան։ Մինչ դէպի հարաւ դիմելով արևասիրտ ծովագնացները հասան Հանդուկիտ կղզին, մտան Մօնթաուն ծոցը, այդտեղից գնացին մինչև Թօուենթօնի գետաբերանը և այստեղ ափը դուրս եկան։ Ձոխ բուսականութիւնը, ձկան առատութիւնը, համեմատաբար աւելի կակուղ եղանակը, այնքան գրաւեց եկուորներին, որ նրանք դուրս քաշեցին նաւերը, և սկսեցին խղճերնը չինել բնակութեան համար։ Շրջակայ բլուրների վրայ բոլորվին հասուն պտղով գտնուած խաղողի որթերը նոր ու տարեկան ընծայ էր Լէյֆի համար, և նա ընկերների համաձայնութիւնով անուանեց այդ տեղը «գեղեցիկ, խաղողի աշխարհ»։

Անցաւ ձմեռը։ Լէյֆը իր ընկերներով վերադարձաւ Էրենլանդա։ Նրա պատմածներին չափ ու սահման չկար։ «Այն օրհնած աշխարհ է համեմատելով մեր Էրենլանդի հետ», ասում էին նրանք իրանց հայրենակիցներին։ Եւ ահա յաջորդ տարին Էրիկի երկրորդ որդին՝ Թօրվալդը ցանկացաւ տեսնել նոր երկիրը։ Նա երեսուն ուղևորներով հասաւ մինչև Թօուենթօն գետը. եղբօր տուած տեղեկութիւններով նա գըտաւ նրանց չինած խրճիթները և այնտեղ ձմերեց։ Երկու տարուայ ընթացքում նա մի քանի ծովային ուղևորութիւններ արաւ դէպի ցամաքի հարաւային ափերը. սակայն մահը վերջ դրաւ նրա հեռաւոր արշաւանքներին, նա մեռաւ տեղացին բնիկ բնակիչների հետ ունեցած կռւում ստացած վէրքից։

Նորմանական եկուորների նկարագրածով՝ «խաղողի աշխարհի» բնիկները ամենևին այնպիսի բարբարոսական, ու-

ժեղ, վայելչակազմ կարմրամօրթեր չէին, ընչվլսին գտնուեցան այստեղ տասնեվհեցերորդ և տասնեօթներորդ դարու սկզբներուն՝ անգղիացի գաղթականներուն ժամանակ։ Ընդ հակառակ դրանք վոքրահասակ ցեղ էին. եւևի Էսկիմօսները են եղած, որոնց Նորմաննները ծաղրելով «քաջաչներ էին անուանած։ Ուստի պէտք է ենթադրել, որ տասնմէկերորդ դարու սկզբում, Էսկիմօսները Հիւսիսային Ամերիկայում այնպիսի տեղ էին բռնած, որ աւելի դէպի հարաւ էր, քան այժմեան նրանց բնակավայրը։

Շատ հնմնատուր կըլինի կարծել, որ Ամերիկայի Նորմանների ձեռքով առաջին բացման և Բոլուսքոսի բացման ժամանակամիջոցում՝ եղած է այնտեղ ժողովուրդների մեծ տեղաշորժութիւն և թէ կարմրամօրթները ցամաքի կէնդրոնական վայրերից մղուած են դէպի Հիւսիսային կողմերը, և սրանք էլ նրանց հերթին քշել են Էսկիմօսներին դէպի Բեւեռային կողմերը։

Թօրվալդեդի վիճակը չվախեցրուց Էրիկի երրորդ որդուն՝ Կարմրուկին՝ որ 1005 Թուին նոր արշաւանք կազմեց և գնաց իր եղբօր ետևից. բայց նրա բախտը չբերաւ, նա և իր ընկերները վարակիչ հիւանդութիւնով կոտորուեցան։

Երկու տարուց յետոյ մի Հրենլանդացի գաղթական՝ Թորֆինն անունով, նոյնպէս ուղևորուեց դէպի «խաղողի աշխարհը», ոչ թէ մենակ, այլ հինգ կանանց հետ, որոնց մին իր կինն էր, և 160 տղամարդկիներով, նա այնտեղ կացաւ 3 տարի. «քաջաչների» հետ յաճախուրի մտաւ և ի հարկէ կարող էր հարստանալ, բայց ընկիների հետ գակ և կռիւ բանալով, ոչ մի առողջ շտապեց հաւաքուել և 1010 Թուին յետ եկաւ պատմատրուեց Հայրենի կուրի տակ։ Իր ընկերները չվերադարձան, այլ հաստատ բնակուեցան այնտեղ և շուտով շատ բազմացան։

Յայտնի է որ 1121 Թուին Էրիկ եպիսկոպոսը Հրենլադան քրիստոնեայ դարձնելով՝ նաւարկեց դէպի «խաղողի աշխարհը», որ այն տեղն կռատաշատ մնացած բնակիչներին էլ սուրբ հաւատին դարձնէ, ուր և կատարեալ յաջողութիւնով պսակուեց իր ձեռնարկութիւնը։

Այժմեանակից սկսած անգրովկեանեան աշխարհի մասին տեղեկութիւնները նուազում են և պատմութիւնը

լռում է մինչև տասնևչորրորդ դարու կէսը։ Ոչ ոքն յայտնի չէ, թէ ինչ պատահեց հիմնագիրը Եւրոպայի գաղթականներին. կարելի է դրա պատճառն է Հրեղէնդայի տարեգիրների յանկարծակի չքուելը, որը, երևի, կապ էր պահում Խալանդի և «խաղողի աշխարհի» մէջ։ Իսկ Հրեղէնդի համար էլ լաւագ չէին բաց անում, վասնզի ցրտաշունչ պինդ ձմեռը տևեց նախ երկար, բոլոր բնակիչները վչացան սովից և ցրտից, և երկիրը անհետացաւ աշխարհի երեսից տառացիօրէս Թաղուելով։ Միայն տասնևվեցերորդ դարում Հրեղէնդան կրկին գլուխ բարձրացրեց և նրա մէջ երևացին կեանքի նշոյլները։

Ա.դպէս Ա.մերիկան, այդ հին ժամանակուայ վիպական աշխարհը, մի առժամանակ դուրս նայելով «ալիքների աղջամուղջից» սպասեց Քրիստափոր Կոլումբոսի յայտնուելուն, որ «Նոր աշխարհ» անունով նշանաւոր տեղ բռնէ նեղկայ ժամանակի պատմական էջերի ընթացքում։

I.

Պատուայի Հեմարանի ընդարձակ դահլիճը լիքն էր դեռ նոր պարապմունքներին աւարտած աշակերտներով. մեծերը պատուաւորը ևլուրջ կերպով քայլում էին դէսուդէն և խօսում էին դպրանոցի գործերի վրայ, իսկ փոքրերը ցնծութեան աղաղակներով վազեցին Հեմարանին կից պարտէզը, ուր ուրախ-ուրախ մաքուր և տաք օդ ծծելով մի քանի ժամերից յետոյ, որ անցուցել էին դասարանի խեղդուած սենեկին մէջ. ամենից փոքրերը դուրս ընծած վազում էին, սիրուն արագութիւնով և ճարպկութիւնով վեր էին ելնում բարձր ուղղաձիգ ծառերի վրայ և աշխատում էին կարելի եղածին չափ ուսուցիչների և վերակացուների աչքին չընկնել ու այնպէս առաջ տանել իրանց ընդհանուր և կայտառ խաղերը։ —Գնանք պարտէզում խաղալ, Քրիստ, ասում էր մի տասն և հինգ տարեկան տղայ, դուսրէթ, կարմիր երեսով մօտենալով մի այնպիսի նստած ընկերին, համարեա իրան հասակակցին տարիքով, բարձր, վայելչահասակ պատանուն, քնքոյշ դէմքի գոյնով և շագանակագոյն մազերով. այս պատանին խորասուզուած էր մի գրքի ընթերցանութեան մէջ։

—Համբերիր ին քիչ, Անժելո, Թող գլուխը վերջացնեմ, պատասխանեց սա վեր չնայելով։

—Ձեմ իմանում, Քրիստ, ինչպէս ես կարողանում ամբողջ ժամեր ընթերցանութիւնով պարապել խոկոյն դասերը վերջացնելուց յետոյ։ Իմ գլուխս ձաքում է այդ լատիներէն կոնարհումներից, հոլովներից, հատընտիր հատուածներից և հին դասականների իմաստուն ասացուածներէն ձեռքից. դասը վերջում գլուխս այնքան է յոգնում, որ բոլորովին անընդունակ եմ դառնում հասկանալ ուսուցիչների ասածները և համոզուած եմ որ նրանք էլ քիչ են հասկանում իմ ասածը։ Զգիտեմ, կըկարողանա՞յ հայրս ինձ ուսեալ դարձնել։ Դէ, Թող գիրքը, Քրիստ, գնանք այգին։—Դու չես կարող հաւատալ, ինչպէս հետաքրքրական է այս գիրքը, գոչեց հետամամբ՝ շրխկոցն պատանին. քանի նախադասեր, ենթադրութիւններ, յոյսեր են խառնվում իմ գլխումս, երբ ես այս կարդում եմ։—Լաւ, այդ ինչ դիւթական գիրք է։—Գիրքն որ դիւթական է, լաւ ասացիր, որովհետև սրանով ընթերցողը ծանօթանում է անծանօթ դիւթական աշխարհների հետ. սա Մարկո-Պօլոյի Ճանապարհորդութեան նկարագիրն է,որ նա գրել է այնժամանակ, երբ գենուացիք նրան գերել էին և բանտարկել։ Միշտ Մարկո-Պօլո, Մարկո Պօլո, ես կարծում եմ դու այդ անգլիը արած կըլինիս, երբ արտագրում էիր ողջ գիրքը, և դա այնպիսի աշխատանք է, որին միայն դու ես ընդունակ, Քրիստ, քո անյողդողդ հաստատամտութիւնով և համբերութիւնով։

—Ես վող չունէի գիրքը գնելու համար, բայց ես կորած չեմ համարում ոչ ժամանակը, ոչ աշխատանքը, որ գործ եմ ածել այդ արտագրելու, վասնզի ես երբէք չեմ բաժանուել իմ գրուածքից։ Հայրս դատարկ ցնորքներ և անիրագործելի փանտազիաներ է կոչում ոչ միայն բոլոր իմ անձնական նախագծերս և ենթադրութիւններս, այլև հին Ճանապարհորդների պատմածները իրանց հեռաւոր ուղևորութիւնների և արկածների մասին։—Այնուամենայնիւ հազիւ թէ քո հայրը կարողանայ քեզնից կարգին իրաւաբան կամ վորձուած վաճառական պատրաստել, ինչպէս որ իմ հայրը չի կարող ինձ ցամաք, մասնաւորն իմաստութիւնով ուսումնական դարձնել։

—Ինչ որ էլ լինի, ես պէտք է նաւատան դառնամ, գո-

չեց վառվռուն պատանին եռանդով։

—Իսկ ես՝ սպաս, հեծելազօրի սպա՝ գոչեց նոյնպէս Անժելօն։

—Իմ հայրը բարի է, նա անկեղծ սիրում է ինձ և չի դիմադրիլ իմ կոչմանը, իմ հոգելից ձգտմանը դէպի ծովը, դէպի ուղևորութիւնները և դէպի ծովային ծառայութիւնը։ Ես պէտք է ծովապետ լինիմ, Անժելօ, անպատճառ ծովապետ։ Ես կըվաստատուրցնեմ իմ տոհմը, իմ պապերը կորուցել են նրանց կարողութիւնը յօմբարտական պատերազմների ժամանակ, և սկսել են պարապել միայն առևտուրով, բայց ես Փոլումբեան տոհմին կըդարձնեմ նրա կորուսած նշանակութիւնը, ասաց պատանին խրոխտաբար. նրա աչքերը փայլփլում էին, երեսը պատել էր ազնուական կարմրութիւն։

—Այո, Բրնստ, դու ժամանակին ականատես կըդառնաս, ասաց Անժելօն զարմացած նայելով իր ընկերին։

—Ես մօտ օրերս կըձգեմ կերթամ Հեմարանից և կըխնդրեմ հօրս թոյլ տալ ինձ ծովային ծառայութիւն մտնել։

—Դու չոյս ունիս, որ նա կըհամաձայնի քո խնդրին։

—Այո, նա ինձ սիրում է, բացի դրանից իմ պապը ծովապետ է, ինձ կօգնէ. վաղը ես կիմանամ ինչպէս կըվճռուի իմ վիճակը։

Այդ միջոցին ներս մտաւ դալրանոցի ծառաներից մինը և ասաց Փոլումբոսին.

—Պարոն Բրնստափոը, ձեզ կամենում է տեսնել ձեր հօր սպասաւորը. նա հէնց հիմա է ժամանել այստեղ Դենուայից։

—Դա անպատճառ, Պիետրօն կըլինի, որին հայրս ինչ և իցէ չանձնարարու թիւնով ղրկած կըլինի. գնանք, Անժելօ, այդ բարեհոգի ծերուկ անձնի հետ խօսել մի քիչ։

Ձեմարանի լայնարձակ բակը եղնելով՝ պատանիները տեսան մի քիչ հեռու կանգնած՝ խիստ նիհար, կնճռոտ, մուխ դեղնագոյն ծերուկին, որ հագուած էր ցնցոտի նաւաստիական զգեստ։ Նա թոյլ էր, հետաքրքրութիւնով նայում էր իր մօտով անցնող աշակերտների խմբակներին, որոնք տաքացած խաղում էին գնտակով։—Բարև, Պիետրինօ, ասաց Փոլումբը, մօտենալով ծեր նաւաստուն, ինչ գոլօվ եմ ղրկուած հօրից։—Պատիւ ունիմ գլուխ տալ ձեզ, պարոն Բրնստափոը, և ձեզ նոյնպէս, պարոն Անժելօ, պատասխանեց նա վերցնելով գտակը, որ ձիշտ ծովերակին էր դրած և

խոնարհ գլուխ տուաւ։ Ձեր հայրը պատուիրել է յանձնել ձեզ այս ծրարը և տեղեկանալ ձեր ողջուխեան մասին։

—Ինչպէ՞ս է հայրս։

—Ձեր հայրը՝ պարոն Դոմբիներկը՝ Աստծու ողորմութիւնով իրան շատ լաւ է զգում, վերջին անգամ Ֆլորենսա գնալուց յետոյ, ուր նա եղել է իր առևտրական գործերով։

—Իսկ իմ պապի՝ Տովատետ Իերօնիմի՝ առողջութիւնը ինչպէս է։

—Պարոն Տովատետը կայտառ է և զուարթ, ինչպէս միշտ այն օրերում, երբ նրան չէ տանջում ոտի ցաւացաւը, միմիակ ոտն, որովհետև միւս ոտը նա վաղուց կորցրել է։

—Բայց իմ տէրտէրը էլի առաջուան պէս առողջ և ուրախ է, հարցրեց Փոլումբը։

—Ճիշտ այնպէս, պարոն Բօրտօլօն զուարթ և կարմիր է ինչպէս խնձոր, բայց առանց ձեզ անհուրթիւն է զգում և անհամբեր ձեր տուն դառնալուն է սպասում։—Նա շատ չի սպասել, դուք հիմ ինքը եկել Պիետրինօ։

—Այո, պարոն Քրիստափորը, հիմ՝ Նինեատայի վրայ. այդ հին այնպիսի արշաւ ունի, որ ոչ մի Տովային սրտրմունք չի կարող համեմատուել նրա ցաւակումների և զարկերի հետ, որով նա ինձ վարձատրում էր ամբողջ Ճանապարհին։ Ես աւելի լաւ կըհամաձայնէի ամենավատ նաւով ուղևորութիւն անել մինչև Խսպանիա կամ Փորթուգալիա, քան թէ Նինեատայի վրայ յետ դառնալ Գենուա։

—Ինձ ձեզ հետ տարէք, Պիետրինօ, ես պէտք է, ինչքան կարելի է, շուտ տեսնուիմ հօրս հետ։

—Ներեցէք, պարոն Քրիստափորը, ես չեմ կարող ձեր ցանկութիւնը կատարել։ Ձեր հայրը՝ պարոն Դոմբիներկը ինձ կանչեց մօտը և ասաց, երգնաս Պատուա, երդանձնես այս ծրարը Քրիստափորին, կիմանաս իր առողջութիւնը և կրվերադառնաս այստեղ։ Ես չեմ կարող չկատարել նրա տուած հրամանները, պատասխանեց վճռաբար Ծեր նաւաստին։

—Եթէ այդպէս է, յետ տարէք բերած ծրարը և այս նամակը տուէք հօրս, ասաց Փոլումբը գրպանից մի կնքած փաթեթ հանելով։

—Լսող և կատարող եմ, պարոն Քրիստափորը, բոլորը կանեմ ինչպէս ձեր հրամանն է. մնաք բարև, սիրուն պա-

ըոններես, ասաց Ծեր Նաւաստին՝ խոնարհ գլուխ տալով։

—Յաւերժութիւն, Պիեարլինօ, ես կարծում եմ որ երկու օրից տանը կըլինեմ, այնպէս որ դու լինելից շատ քիչ առաջ կըհասնես։

Նաւաստին կրկին խոնարհեց գլուխը, գտակը քաշեց ծոծրակը և դիմեց դէպի փողոց։

—Դու վճռել պըծի՛լ ես եղնել Ճեմարանից, Քրիստ, հարցրեց Անժելօն խոհուն կերպով, երբ ծառան դուրս գնաց։

—Այո՛, Անժելօ, այդ լուծուած խնդիրը է, պատասխանեց վստահաբար Քոլումբը, և չհաոյ աւելացրեց՝ իսկ դու չէիր ուզիլ եղնել, Անժելօ։

—Այո՛, Քրիստ, բայց ոչ այնքան շուտ քո պէս, իմ հայրս շուտ չի համաձայնիլ մոռանալ այն մտադրութիւնները, որ ունի իմ ապագայ գործունէութեան մասին. այնպէս որ մինչև պինուրութիւն մտնելս պէտք է վերջացնեմ ուսման ընթացքս Ճեմարանում. իսկ այդ միջոցին երևի դու արդէն նաւերից կըլինես հեռու անյայտ ծովերում։ Աստուած կարժանացնէ արդեօք մեկ օր երբ տեսնել, ասաց Թախծութիւնով պատասխանին։

—Չերփք է, Անժելօ, Աստծու գործերն անքննելի են. շատ կարելի է որ մեզ կըպատահի միասին կռուել մեր Թանկագին հայրենիքի համար՝ դու ցամաքի վրայ, ես ծովի վրայ. և մենք երբ կըտեսնենք,երբ հզօր փողն ձայնը կըհնչի՝ աւետելով Գենուացիների տարած փառաւոր յաղթանակը։ Այժմ գնանք քիչ պտըտել պարտէզում, ասաց ցնծութիւնով Քոլումբը, տանելով Անժելօյին դէպի այգին, որտեղից լսվում էին երանց ընկերների բերկրալից ծիծաղն ու խօսակցութիւնը։

(Կըշարունակուի։)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ա.

ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐԻՑ

Ուզում եմ ծանօթացնել ձեզ, սիրելի ընթերցողներս, Համառօտ կերպով, աշխարհի ամենահին և անդրանիկ քաղաքի—Հին-Նախիջևանի և իր շրջակայքի հետ։

Սրբազան պատմութիւնն ասում է որ Ջրհեղեղից յետոյ Նոյ նահապետը իջնելով Մասիս սարից հիմնեց այդ քաղաքը, որ բնկնում է Հին-Հայաստանի Արարատեան նահանգի արեւելեան սահմանագլխի վրայ։ Նախիջևանից դէպի արևելք 20 վերստի վրայ՝ վերջանում է հռչակաւոր Արարատեան դաշտը և սկսվում են Սիւնեաց աշխարհի բարձրաբերձ լեռները. քաղաքից դէպի հիւսիս նոյն տարածութեան վրայ դառնվում են Վայոց ձորի լեռները։ Այդպիսով Նախիջևանի արևելեան կողմից տարածվում է Արարատեան դաշտը, որ շարունակվում է Երևանի տակից անցնելով՝ Էջմիածինն ու Վաղարշապատը մէջ ունենալով՝ մինչև Կողբի, Սուրմալուի, Իդդիրի սարերը, որոնք միացնող շղթայ են երկու սոսկալիքիթխար լերանց ստորոտների՝ Արարատի և Արագածի։ Այդ դաշտի և մասնաւորապէս Նախիջևանի և իր շրջակայքի հարաւային սահմանն է Երասխ գետը, որի հունդիպակաց լեռնափուշքը է պարսից տէրութիւնը։ Նախիջևանից մինչև Երասխ (ուղիղ դծով) երեք վերստից աւելի է։ Թէպէտ գետը քիչ փոսը ընկած է դաշտի մէջ, բայց շատ տեղեր, մանաւանդ գարնան լուսթեան ժամանակ, նա երևում է քաղաքից, որ նազելի կերպով պտրտվում է հարթ դաշտի ընդարձակութեան ծայրի վրայով, կաստորակ պսպղալով լիտ կանաչազարդ

ծաղկալից հովտում, նման երկնակամարից կտրուած մի ժապաւէնի զմրուխտի ծովի մէջ։ Երևանից մինչև Նախիջևան կառքի ճանապարհով դաշտի վրայից 150 վերստ է. կարճ ճանապարհն է (ձիով) Երևանից Նախիջևան վայոց ձորի լեռներով։ Նախիջևանից դէպի Սիւնիք ու Արցախ գլխաւոր քաղաքը՝ Շուշի կառքի ճանապարհ լեռների միջով դեռ պատրաստ չէ. երթևեկութիւնն այդ ե-



Ուղղագիծ սեղայոյց Հին-Նախիջևանի շրջակայքին։

կու քաղաքների մէջ լինում է ձիով երեք օրուայ մէջ։ Մի կառուղի էլ գնում է Նախիջևանից դէպի ռուսաց սահմանագլուխը Հին-Ջուղա և դէպի սարսից աշխարհը։ Յուլիս և օգոստոս ամիսներում Նախիջևանի շրջակայ դաշտերը դեղնում և մնում են կզզիացած կանաչազարդ գլուղերն ու քաղաքը։ Լեռների ստորոտներից սկսուած դաշտը՝ ընդարձակ տափարակներով սանդխաձև իջնում է դէպի Երասխը։ Հեռու հորիզոնում Նախիջևանից մօտ 200 վերստ դէպի արևմուտք դաշտի վրայ արձանացած է լեռների արքան՝ հսկայ Մասիսը, որը Նախիջևանի կողմից երևում է՝ փոքր Մասիսի հետ միացած զրեթէ աննկատելի՝ մինչպէս մի սուր եռանկիւնի տիտանական սիւն, որը միակ սլանում է երկրի մակերևոյթից օդերի անհուն տարածու-

թեան միջով դէպի երկինք. պարզ եղանակին՝ երկնակամարի փայլուն կապուտակութեան մէջ՝ դա վսեմ և վեհ, գեղահրաշ և զմայլելի, աւելի երկնային և աստուածայինն՝ քան թէ երկրաւոր, մի տեսարան է ներկայացնում: Իսկ լուսնկայ գիշերները դա մի վերին աստիճանի հիանալի և ապուշացնողական պատկեր է. մի գիտնական՝ Պասկալի համար ասել է՝ որ դա մի ամբողջ աշխարհք է. Ներուի ինձ ասել որ այդպիսի գիշերներում նա թուում էր թէ բնութիւնն լինքն է, որ կանգնած մտածում է:

Նախիջևանի արևելեան շրջակայքը պատող լեռների մէջ նշանաւոր է մի սար՝ օձի գլխի ձևով՝ կոտորը հեղքուած ապառաժ սար գաշտից բուսած: Դրա վտակներում գտնվում են օձեր, ուստի կոչուած է լծուրքերէն լեզուով Իլան-դաղի — օձասար: Քաղաքից դէպի հարաւ՝ էլ աւելի զեղանկար պատկեր է ներկայացնում. մեծ գաշտ՝ լիքը պիղերով, այգիներով, արհեստական բարձրադէզ բարտն անտառներով և անթիւ արտերով, արօտներով. ապա լայն ու տպատ սփռուած խնկելի Արաքսը, որի ռուսատպատական ափերում մերթնակ, իրարից հեռու-հեռու շարուած են սահմանապահ զինուորների պահականոցները, որոնց բակերում սմսուռայ տղջամուղջ գիշերները վառած մոծակ-հալածող կրակների ալաւը՝ հոգեզբաւ տեսարան է կազմում քաղաքում զբօսնողների համար: Գաշտի հարաւ արևելեան ծայրում ուղիղ գետի ափին երևում են Ս. Վարդան զերահռչակ վանքը և մի ապառաժի վրայ Կարմիր վանքը, որից սկսուած դարիւ-դարիւ հասող Արաքսը մտնում է Ջուղայի և մեծահամբաւ նախավկայ վանքի լեռների պատառուածքի ձորձորների մէջ՝ գալարուելով, որոտալով և անվնդասփռոյտ յորձանքներ յարուցանելով: Գարնան մանաւանդ աննկարագրելի է այդ երկրի գեղեցկութիւնը, երբ ամբողջ գաշտը պճնվում է կանաչով, ճոխ այգիները փթթում են, որոնց մէջ սփռուած են անթիւ դեղձի, կեռասի, ծիրանի, սերկևէլի, խնձորի, սալորի և դամբուլի ծաղկած ծառերը, ահագին բուսականութեան որպէս մի ամբողջ գնտաձև բլուր ներկայացնող սաղարթախիտ դափաղջ կոչուած խոշորատուերը ծառերը, անհամար վայրի կարմիր ու դեղին ծաղիկները, և այլն և այլն: Նախիջևան և իր շրջակայքը լինքն են պատմա-

կան յիշատակներով աւեր բերդերով, վանքերով և այլն։ Օդը առողջարար է բոլորովին. յատուկ տեղական հիւանդութիւնները չկան՝ ոչ ջերմ, ոչ տենդ. 40 աստիճանի տաքութիւնը լինում է միայն յուլիսի 15-ից մինչ օգոստոսի 15. ախորժելի եղանակ է անում մինչև դեկտեմբերի կէսը, այդ ժամանակ դաշտերի վրայ ձիւնը նստում է մինչև փետրուարի կէսը. ձմեռը մեղմ է. խիստ սառնամանիք չի լինում. Արաքսի ափերը մի քանի օր միայն բարակ սառուց է կապում։

Ջրաբաշխութիւնն առատ չէ. տակաւին յաջողած չեն Արաքսի ջրերից շահուելու. նախնիք ջուր են եղել դուրս բերած Արաքսից ոռոգման և ջրաղացների համար, որոնց նշանաւոր հետքերն ու աւերակները մնում են դեռ ջրի մէջ և գետի ափերում։ Ամբողջ դաշտը — քաղաքը, դիւղերը և անդաստանները ոռոգուղն է նախիջևան գետը, որ սկիզբն է առնում վայոց ձորից, և մի քանի արհեստական քանքաններ. դրանք են և մարդկանց խմելու ջուրը. բայց քաղաքում կայ և մի բնական քաղցրահամ աղբիւր Ձուչ անունով։ Ամենաառողջարար ջուրն է համարվում այստեղ Արաքսինը, որից հարուստները, հիւանդները, ճեղերը կուժերով բերել են տալիս օգտուելու։ Ջրի նեղութիւնը սկսվում է յունիսի վերջերից խաղողի այգիները ջրելու համար։ Ամբողջ գաւառը և քաղաքը ընտրում է ջրպետներ, որոնք հսկում են կանոնաւոր ջրաբաշխման ազդարնակութեան։ Ջրի սակաւութեան պատճառով ահագին տափեր դէպի Ջուղա տանող ճանապարհի երկու կողմերում, նոյնպէս Ազրակունիսից դէպի հիւսիս մնում են անմշակ։ Նախիջևանի և շրջակայքի հողը ամենափարթամ բերրի է. հողը կաւային է և աւազախառն։ Պարտէզները միայն պարարտացնելու համար գործ են ածում աղբ, աթարի մոխիր և այլն։ Հանքերից նշանաւոր է կարմիր վանքի քարահանքը, մուխ կարմիր ոչ այնքան պինդ կրանիտի տեսակից, որը գործ է ածվում բերդերի, վանքերի, եկեղեցիների և կամուրջների շինութեան համար։ Այդ քարահատի մօտ գտնվում է սպիտակ, ամենաարտիր գաջի անսպառելի հանք, որ նոյնպէս հնուց արդէն բանում է։ Այդ քարից և գաջից լաստերով Արաքսի վրայից կրում են պարսից սահմանը։ Քաղաքից

մինչև այդ հանքերը 15 վերստ է։ Բայց ամենահռչակաւորն է Նախիջևանի աղահանքերը, որոնք գտնվում են քաղաքից 20 վերստ հեռու դէպի հիւսիս։ Այդ աղահանքերն արդէն յայտնի են հազարաւոր տարիներից ի վեր և մատակարարում են անհատնում աղ Ջարուրի, Վայոց ձորի, Նախիջևանի, Սիւնիքի և Արցախի գաւառներին։ Աղի փուխրը իր տեղը արժէ 10 կոպէկ։ Մարդիկ աղ պարունակող լեռների ստորոտից մի քիչ վեր ծակելով՝ թափանցել են խորերը և փորելով շինել են ահագին կամարակապ աղի սիւների վրայ յենուող սրահներ, որտեղից ստացել են աղը. խորերից դէպի սարի կատարը հանել են հսկայական յերդեր օդափոխութեան և մասամբ լուսի համար. բանւորներն ապրում են ներսը և դուրսը, խմելու ջուրը բերում են հեռուից սայլերով։ Աղահանքերի մի մասը պատկանում է տէրութեան, մի մասն էլ տեղական թուրք խաներին։

Վառելիքի համար ամենքը գործ են ածում նախիրի աղբը, որը գոմից հանելով թափում են գիւղի փողոցներում և հրապարակներում. այդ կերպով աղբը խառնուելով ջրերի, անձրևի, թափուած խոտերի, յարդերի, ջուրերի հետ և կոխկռտուելով մարդիկներից ու անասուններից դառնում է մի պինդ դանգուած, որը մի քանի ամսից յետոյ կտրտում են ու դարսում բակերում. այդպիսով պատրաստուած աղբը ասվում է փիթիր, քեարմա, աթար. փիթիրի մանրուքը ջրով շաղախում են և դունդեր կազմելով կպցնում են պատերին կամ շարում են գետնի վրայ չորանալու և ապա դարսում են նոյն կարգով։ Վառելիքի է ծառայում նոյնպէս ոչխարների, այծերի և ուղտերի չորցրած կտիտը. կպչանի համար մեծ քանակութիւնով գործ են ածում պեանգիզ անունով մի բոյս, որով անջրդի տեղերը ծածկուած են *)։

*) Դրա ընտիր տեսակը դանւում է Պարսկաստան, ուր նա կոչւում է դեւան կամ գաղ. գաղը ամրողջ վշտիշատ է և շատ «իւզալի». այդ իւղային հիւթը այնտեղ հաւաքում են և ծախում են եւրոպացիներին վրայ փուխրը 15 մանէթով. դրանից պատրաստում են խեժ, դեղորայք, ընտիր տեսակ շրէշ. իսկ ամենաընտիր տեսակը գեաւանի կամ գաղի կայ թեհրանի և Շիրազի կողմերը, ուր գիշերօրայ ցողը հատելով այդ բոյսի թփերի վրան, նրա ճիւների վրայ գոյանում է սիսեռի մեծութեամբ սպիտակ խեժի վերին աստիճանին քաղցր գնդակներ. առաւօտները դրանց հաւաքում են ուտելու. մահաւանդ ինչպէս դարձ

Փայտը ինչպէս վառելիք կիրառութեան մէջ է միայն քաղաքի ունևոր դասակարգի համար. փայտը բերում են գլխաւորապէս Վայոց ձորից և մասամբ Սևնիքի լեռնային անտառներից, նոյնպէս շրջակայ այգիներից – չորացած և ծեր ծառերը՝ մանաւանդ ծիրանի: Վերջապէս վառելիքի համար գործ են ածում նմանապէս որթի մատերը մեծ քանակութիւնով:

Ժողովրդի զբաղմունքն է դիւղերում ընդհանրապէս հացաբոյսերի, խաղողի, բամբակի և մասամբ էլ դեռ նոր սկսուած, ծխախոտի, սակաւ էլ շերամի մշակութիւնը. իսկ քաղաքումը պարապում են առևտուրով, արհեստներով և այգեգործութիւնով. կալուածատէրերը թուրքի խաներն են և հայոց վանքերը. առհասարակ բոլորի տնտեսական դրութիւնը գոհ վիճակի մէջ է. դիւղերում գրեթէ տեսն ես այգի ունի բացի վարելահողերը. շատ շատերը նրանցից ունին անտառներ. ամանոցը մինչև 10 – 12 հազար բարդի ծառից է բաղկացած: 5 տարեկան բալուին արժէ 1 – 2 ռուբլի, 8 - 10 տարեկանը 8 ռուբլի և այլն. բարդիի փայտը ծառայում է ատաղձի, շինութեան համար: Բացի դրանից Աստապատ գիւղի բնակիչները մեծ յաջողութիւնով պարապում են բրուտի արհեստով. դրանք ամբողջ գաւառի համար պատրաստում են գինու 15—20 փութ պարունակող կարասներ, կուժեր, կուլաներ և այլ անօթներ: Քաղաքին կից Զեխմահմուտ և Ալիապատ գիւղերում կան աղիւսի փուռեր շինականներին սեպհական: Չնայած այդ ամենին, դործի և աշխատութեան մեծ պակասութիւն է զգացվում այդ գաւառում, ուստի տունը մէկը գիւղի տղամարդկերանցից՝ գնում են բանուորութեան Թիֆլիս և Ռոստով – Նոր-Նախիջևանի մօտ Դօն գետի վրայ: Հուսկ ուրեմն, ցաւօք սրտի, սիրելի ընթերցողներ, պիտի չլիշենք և Նոր-Նախիջևանի մի քանի գիւղերի, մասնաւորապէս Թմբուլի (և Ջահուկի ու Աստապատի) Սալմաստից գաղթած բնակիչների մի ամօթալի զբաղմունքը, այսինքն դրանք մկների պէս սողոսկելով անցնում են Ռուսիա և Սիբիրի խորերը, խաբում

Մեր ասկառաբիւն, կրծքացաւից, բարակացաւից մաշուող մարդիկ. այդ բոլորովին են կիրակվում գլխաւորապէս և ուրիշները:

են միամիտ ժողովրդին ձևանալով Երուսաղէմից եկած ուխտաւոր, ժողովում են նուէրները, վաճառում են խաչեր և այլ մանրուքք, շատ անգամ էլ ձեռնամուխ են լինում գաղշելի գողութիւնների և այլ ցած ու կեղտոտ բաների, որոնց մասին երկարօրէն գրած են հայ և ռուս բանասէրները. այդ ցեխոտ աիտը շատերը կարծում են, որ հետզհետէ թուլանում է. ես, ինչպէս միքիչ ծանօթ այդ կողմերին, կարող եմ ասել, որ խաչագողներ և խաչագողութիւն այժմ ևս կարգին կան, որը մեծ անպատուութիւն է բերում Նախիջևանի և շրջակայ ժողովրդին:

Միքանի գիւղերում կան բամբակ գզելու եւրոպական մեքենաներ. բամբակը արտահանում են քաղաքի առևտրականները դէպի Ռուսաստան: Նախիջևանը որովհետև հեռու է կենդրոնական քաղաքներից և չունի նրանց հետ դիւրատար ճանապարհի հաղորդակցութիւն, ուստի նրա պատուական գինիները և օղին չեն վաճառվում, բայց եթէ վայոց ձորի և Հիւսիսային Սիւնիքի լեռնային գիւղերում: Խաղողների մէջ տիրապետող ընտիր տեսակն է «չամչի» կոչուածը, պեղնագոյն, մեղրածորան, ձուսձև մանր հատիկներով: Խաղողի որթերը ցրտահարութիւնից պահպանելու համար ձմեռը ծածկում են հողով և գարնան սկզբին բանալով կտրտում են մատերը: Մրգերից նշանաւոր է մանաւանդ այստեղի դեղձը և խնձորը: Նախիջևանի վրայով Պարսկաստանից դէպի Ռուսաստան կարաւաններ են գալիս, որոնք բերում են չոր մրգեղէն, մորթի, չիթ, դորգեր և այլն: Քաղաքի առևտրականներից շատերն իրանց ապրանքը բերում են Ղուշուց, Երևանից և Թիֆլիսից, մի երկուսը միայն գնում են Մոսկուա: Ղուշուց եկած կարաւանները բերում են սև ու մաքրած նաւթ, ռուսի ապրանքներ, և տանում են աղ անբաւ քանակութիւնով:

Նախիջևանի հայ բնակիչների մեծ մասը գաղթած են Դաւրէժից 60 տարի սրանից առաջ. խօսում են արտաբատեան բարբառով. իսկ գիւղերի բնակիչներն են Սալմաստից ու Խոյից գաղթած հայեր, նոյն թուին Ռուսաց և Պարսից պատերազմից յետոյ, ռուսները և Էջմիածնի հոգևորականների յորդորմամբ: Սալմաստեցոց լեզուն խիստ աղաւաղուած և անախորժ է: Արարատեան հին բնակիչ-

ներից մնացած են միայն 150 տուն Աստապատում, ուր կայ 200 տուն էլ Սալմաստեցի, և 100 տուն էլ Ջեխմահմուտ գիւղում. դրանք խօսում են էլի իրանց Արարատեան բարբառով. սովորական է տեսնել որ մարդը խօսում է, օրինակ, սալմաստցու խժդժական բարբառով, իսկ կինը մաքուր Արարատեան բարբառով: Կանանց հագուստների տարազը արարատեան է. մեծ հանդէսներով և կերուխումով կատարում են թաղումները և հարսանիքները. պարում են առանց սեռի ու հասակի որոշման միասին՝ ծեր, տղամարդ, պատանի, աղջիկ, հարս, պար բոլորած և ձեռք ձեռքի տուած կոնդ անունով զմայլելի պարը, որը տևում է երկու ժամ և փողերի եղանակաւորութիւնով վեց տեսակ փովոխմամբ: Աղջիկները մինչև ամուսնանալը երեսները բաց ու ազատ երևում են. ամուսնանալուց յետոյ երեսները ծածկած են պահում, խորշում են, լինում են «անխօս»: Դէմքի գեղեցիկ գծագրութիւնով հռչակուած են աստապատցիք՝ լայն մեծ երեսով, անստվոր մեծ աչքերով, թաւ ունքերով, ճոխ մազերով և առհասարակ փարթամ բայց գեղանի կանոնաւոր կազմուածքով: Այստեղի ժողովուրդը տարին վեց ամգամ ուխտագնացութիւն է կատարում մեծ պատրաստութիւնով և ջերմեռանդութիւնով, եղների, հորթերի, հաղարաւոր ոչխարների և ապրանքների զոհաբերութիւնով. գոյացած արդիւնքի մեծ մասը ղրկվում է Ս. Էջմիածին, մի մասն էլ մնում է տեղական վանքերին և դպրոցներին: Առաջին ուխտագնացութիւնը կատարվում է «Նոյան տապանի» վրայ, որը գտնվում է քաղաքի հայոց դերեզմանատանը, Զատկից յետոյ՝ առաջին կիւրակէ օրը. երկրորդը լինում է զատկի երրորդ կիւրակէ օրը Ջեմահմուտ գիւղում, որի եկեղեցում գտնվում են հին խաչեր մասունքներով, ըստ աւանդութեան Արցախի վանքերից բերած. երրորդը կատարվում է Համբարձմանը յաջորդող կիւրակէին Քամու խաչում Ջահուկից վերև. չորրորդը Վարդավառին Ապրակունիսի Ս. Կարապետ վանքում, հինգերորդը Պարսից ոահմանում գտնուող Նախավկայի վանքում Աստուածածնին: Այդ ժամանակ ռուս կառավարութիւնը աստիճանաւոր է նշանակում Ջուղայից վերև Պարաշամբի պլմացը, որը հպատակում է ռուսահպատակ հազարաւոր հայ ուխտաւորներին

ապահով լաստերի վրայ Արաքսի միւս ափը անցնելու և յետ դառնալու մի օրից յետոյ. ամեն ուխտաւորի տըրվում է մի տոմսակ անունը վրան գրուած: Վեցերորդ ուխտագնացութիւնը կատարվում է Վայոց ձորի Ս. Խաչ վանքում իր տօնի օրը՝ սեպտեմբերին. վերջինս աւելի բազմամարդ է լինում: Ի վերջոյ պէտք է աւելացնել որ ժողովրդի մեծ մասը գրեթէ այդ վեց ուխտին էլ յաճախում է մի տարում և ամեն տարի մշտապէս, բացի դրանից տարին մի անգամ գոնէ բերում են մեծ հանդէսներով քաղաքը և դիւղերը Ապրակունիսի Հազարափրկիչ Մեծ-Խաչը և միւս վանքերից սրբերի «աչերը»:

Նախիջևանը շինուած է դաւառի կենդրոնում մի տափարակի վրայ, որը թեթև դառիվայր շրջունքով իջնում է և միանում Արաքսի դաշտավայրերի հետ. փողոցները անկանոն են. տները կաւից են, հում աղիւսով առաւել. կտուրները տափարակ կաւով ծեփած. անձրևից չեն կաթում. ձիւնը պալուց յետոյ իսկոյն սրբում են նրանց կտուրների վրայից. բակերը շրջապատած են ցեխի պատերով. ամեն տան առաջ կայ գոնէ մի փոքրիկ պարտէզ. տները վերջանալուց՝ կից սկսվում են քաղաքացիներին պատկանող այգինները, բանջարանոցները և տրնկովի անտառները: Շինութիւնների մէջ միակ նշանաւորն է հին խաների Հոյակապ, ընդարձակ սալարկական ճաշակով կառուցուած ապարանքը մի դառիվայրի բարձրութեան վրայ քաղաքի ծայրում և Հայոց նորակառոյց Ս. Գէորգ եկեղեցին, խաչաձև, գողտրիկ, բարձր, սրածայր դմբեթով. դա դոնվում է քաղաքի մէջտեղը դլխաւոր հրապարակի և փողոցի վրայ. ամբողջապէս շինուած է Կարմիր վանքի լեռան կարմիր քարերից — կոփածոյ. ուրեմն ժողովուրդը այդ քարերը բերել է (ապրով) 15 վերստ հեռաւորութիւնից: Նոր եկեղեցու բակումն է յաջորդաբանը, Հոգևոր կառավարութիւնը, երկսեռ դպրոցների շէնքերը, թատրոնական դեղեցիկ և ճոխ դահլիճը: Բայց ամենահռչակաւորն է քաղաքի Հասարակաց պարտէզը, որի նմանը ամբողջ Կովկասում չկայ. դրա մէջ Հաշւում է մօտ քսան Հազար ծառ. ունի մէջը դեղեցիկ շադրուան: Բնակիչների թիւը մօտ Հազար տուն է. 300 տուն Հայ, երկու եկեղեցիով, 700 տուն թուրք 7 մզկիթով: Կառա-

վարուժեան քաղաքային դպրոցում կան մօտ 300 աշակերտներ, որանցից միայն 60-ը Թուրք են։

Նախիջևանի միջով անցնում է անդղիացոց Հեռագրի գլծը դէպի Հնդկաստան. հեռագրի սիւները չուգունից են՝ ծուլածոյ, որոնց վրայից անցնում են երկու հաստ՝ մետաղէ լարեր։ Քաղաքի արևելեան ծայրում տարածուած են շատ տների և մի մեծ ճարտարապետ մզկիթի աւերակներ, որանց աղիւսները փորելով գործ են ածում նոր շինուժիւնների համար։ Խանների պալատին կից կայ մի մեծ և բարձր ուժանկիւնանի աշտարակ. որը վարից մինչև վեր զարդարուած է գեղեցիկ քանդակներով և պատմական գրուժիւններով աղիւսների վրայ դուրս բերած և ապա միասին յերիւրած. աշտարակի վրան կայ մի քարէ առիւծ. այդ ոքանչելի յիշատակարանը, որը մի աննման արձան է ճարտարապետի և մի ահագին հատոր է պատմուժեան, երեսի վրայ Թողուած փչանում է, դրա ներսը լեցնում են խանները իրանց հազարաւոր փամբիոլներն։ Այդ աշտարակից քիչ առաջ կայ մի մեծ գեղեցկաշէն դուռ երկու բարձր մինարէների մէջտեղը։ Աւերակներից ներքև մնում է կատարչն բերդի աւերակները։ Բերդից դուրս Հայոց գերեզմանատունն է, որի մէջ է և «Նոյի գերեզմանը». դա մի ցածր, ուժանկիւնի, գլուխը



Նոյի շիրիմը։

տափարակ, աղիւսով ծածկուած շինուժիւն է. կարծես մի մեծ աշտարակի կարկատած մնացորդ է. ունի երկու հանդիսակաց մուտքեր, ներսը կամարակապ է չինուած կենդրոնի մի բարակ սիւնի վրայ. այդ սիւնի մօտ են աղօթում, մոմ վառում, խունկ ծխում. այդ է ժողովրդի «Նոյայ տապան» ասուած տեղը։

Նախիջևանին շրջապատող հայաբնակ գիւղերն են. Ալիապատ, Նորագեղ և Ղարախանբէկլու, մի վերստ հեռու քաղաքից՝ Ջիմմահմուտ՝ Հարուստ մեծ գիւղ 3 վերստ հեռու. ունի եկեղեցի, դպրոցի շէնք և հասարակաց շտե-

մարան. Երմջա, Մարաղա — երևելի ծառաստաններով. Դիզա — ունի դպրոց կառավարութիւնից բացած. Կըզնուէթ, Ապրակունիս մեծ գիւղ, դրա մօտ է Իլանդաղի ստորոտում Ս. Կարապետ մեծակառոյց հարուստ վանքը, պարսպապատ, շատ շինութիւններով. դըպրոցով, դանդակատնով: Այս վանքի մօտ է և Երինջակու քարաշէն մեծ աւերակ բերդը: Գամըրզնդան, Խալիլու, Խալխալ, Ջահուկ, քաղաքից 15 վերստ, բազմամարդ, հարուստ. հին բնակիչներից մի տուն էլ չկայ: Նորերը սալմաստցի են, ունի վառաւոր քառասիւն, սուր բարձրագմբեթ եկեղեցի, մեծ շէնք դպրոցի. եկեղեցու խորանի վարագոյրը հնութիւն է՝ ուշադրութեան արժանի. նա շինած է Եւրոպա (ասացին Միլան քաղաքում) մետաքսից, ոսկեթել ձեռագործ, լատինական գրերով ունի վրան յիշատակարան. դա, երևի, մնացած է կաթոլիկներից, որոնց մեծ քարաշէն եկեղեցին աւեր դրութեան մէջ կանգնած է գիւղի կենդրոնում մի բլուրի վրայ: Թմբուլ մեծ և հարուստ գիւղ - ունի մի եկեղեցի, դպրոցի հոյակապ շէնք, մի հասարակաց շտեմարան. Եմիհանայ, Աստասլատ, դա հին ժամանակը եղել է մեծ և ճոխ քաղաք. այժմ դրա աւերակներն են մնում գիւղից հեռու. ունի երկու եկեղեցի, հիանալի դպրոցական շէնք, հասարակաց շտեմարան:

Գիւղից մի վերստ ներքև՝ Արաքսի ափին կայ մի բերդի աւերակ, քառանկիւնի, մեծ, կաւաշէն, խրամներով պատած. դրա ներսի տներից մի երկուսն է մնացել, վանդի դիւղացիք քանդում և տեղը ցանքս են անում: Բերդի տեղը արտեր՝ ինչ լաւ բան է: Բերդին կից արձանացած է ամայի Ս. Վարդան անունով վանք և հոյակապ վանքը, խաչը դեռ մնում է բարձր սուր գմբեթի վրայ. եկեղեցին մեծ և ամուր շինութիւն է, դրեթէ չվնասուած դարերի ընթացքում, կառուցուած է կամարակապ, չորս սիւնով, երեք խորանով. ուշադրութիւն է դրաւում այն հանգամանքը, որ աղօթարանը (սեղանը) դէպի արևմուտք է դարձրած: Ծողովրդի աւանդութիւնով այդտեղ են թաղուած Վարդանանց պատերազմում նահատակուած զինուորները. եկեղեցու ա բ և ե լ ա ն պատի մեծ դ ու ռ ը մտնում է մի այլ մեծ շինութեան մէջ՝ չորս սիւնի վրայ, կամարակապ, կոփածոյ քարից. սւանդութիւնով այդտեղ

հասարակ ժողովրդի և զինւորների կանգնելու համար է: Սուրբ Վարդան վանքից ներքև երկու վերստ հեռաւորութիւնով ապառաժի վրայ շինուած է Կարմիր-վանքը Ս. Ստեփանոսի: Վանքի շրջապատը կայ ամրակուռ կոփածոյ քարէ պարիսպ՝ բուրգերով. ներսը շինուած է մէջտեղ զեռդամբիներ երկու յարկանի, դրանց վրայ հողով ծածկուած լինելով՝ դարձել է արհեստական բակ, որի մէջ տեղը կանգնած է վանքը, շուրջն ունենալով վանահօր սենեակները, որի պատուհանները նայում են Արաքսին, և միւս այլ շինութիւնները: Այդ զեռդամբիները մտնելու համար, տաճարի ներսը խորանների յատակի վրայ թողած կայ երկու ծակ. մի մուտք էլ կայ բակից, դէպի որը իջնում են քարէ սանդուխքներով: Եկեղեցին չորս սիւնի վրայ է, բարձր, սրածայր գմբեթով: Վանքը ունի շատ արծաթէ խաչեր՝ զարդարուած ակներով, և երեք մեծ արծաթէ «աջեր»: Ունի շատ հին և ծանրագին ոսկեթել սքանչելի ձեռագործ շուրջառներ, թագեր եպիսկոպոսի, եմիփորոններ և այլն: Մեծն Մխիթար՝ Վենետիկի Հայ-միաբանութեան հիմնադիրը, իր բախտը փորձեց այս հրաշալի հովասուն վանքում տպարան և դպրոց հաստատելու, բայց շուտով նա համոզուեց որ տգիտութիւնը դիտութիւն չէ յառաջ բերում, ուստի գնաց գնաց շատ հեռու աշխարհ, ուր գիտութիւնով ու ուսումով լուսաւորեալ մարդիկ կան և ծնունդ տուաւ մեր ազգի նոր մըտաւորական վերածնութեան: Այս վանքի սենեակները բոլորովին մաքուր, պայծառ և կահ-կարասիքով զարդարուած են: Ճանապարհորդն այստեղ ընդունելութիւն է գտնում եւրոպական քաղաքավարութիւնով և ասիական հիւրասիրութիւնով: Վանքի պարսպից դուրս գտնվում է մի փոքրիկ դիւղ 14 տնից բաղկացած և մի պահականոց սահմանապահ զինւորների: Մանգալով այս գեղեցիկ աշխարհում ես զգացի շատ հոգեկան անմոռանալի զուարճալի րոպէներ՝ դիտելով այստեղի բնութեան վսեմ տեսարանները. տէր եղայ շատ ճիշտ և օգտակար տեղեկութիւնների:

Ն. Տ.-ԱԻՏԻՔԵԱՆ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

XIX դարուս ամենասքանչելի վոթոքներից երբեմն լինում է. Ամերիկացի յայտնի աստղագէտ Սաան-Վիգգինս ուսուցչապետի հաշուով՝ —որն արդէն գուշակել էր: 1883 թ. մարտի 9-ի և 1884 թ. յունուարի 26-ի վոթոքներից,—Ամերիկային և Աւստրալիային 1887 թ. սեպտեմբերի 19-ին մի սարսափելի բան է սպասում: Այդ մի ջոգին կըսկսի վչել այն քամին, որը շառաչում էր 1869 թ. հոկտեմբերի 7-ին, և որի միջոցին Նոր-Անգլիայի բոլոր անտառները համարեա ոչնչացան, իսկ մըրկից մնացած ծառերն էլ բանի պէտք չէին: Վիգգինսը հաշուել է, որ պարբերական հողմերը կրկնվում են իւրաքանչիւր 5461 օրից յետոյ, և այդ ժամանակը լրանալու է 1887 թուի սեպտեմբերի 19-ին: Սեպտեմբերի 2-ին մըրկիը վերին աստիճանի կըսաստկանայ և հետն էլ կըլինի զօրեղ երկրաշարժ, որը նոյն տարուայ հոկտեմբերի կիսին կըզգացուի նաև Կալիֆորնիայում և Հարաւային Եւրոպայում: Իսկ միևչև յիշեալ ժամանակամիջոցը Ամերիկայում վոթոքները կըլինեն ներկայ տարուայ հոկտեմբերի 20—22, 1886 թ. մարտի 18—20, նոյնպէս և սեպտեմբերի 29—30-ի մէջ, և վերջապէս 1887 թ. մարտի 26—29 թուերի մէջ:

Մամուկ (թունաւոր սարդ) և դոդոշ. Բնագէտ մինը պատահմամբ հանդիսատես է լինում մամուկի և դոդոշի մէջ տեղի ունեցած մի մենամարտութեան: Մամուկը, ասում է նա, թռաւ դոդոշի վրայ և մի լաւ կծեց: Դոդոշը ձեռք ու ոտք անելով դէն ձգեց իրանից մամուկին և շտապեց ջրափոսի մօտ, ծամեց նրանից ու կրկին վերադառնաւ մամուկի մօտ և աշխատում էր նրան բռնել իր թաթերով: Մամուկի երկրորդ կծելուն էլ դիմից իր բժշկութեան միջոցին՝ ծամեց նրանից, այսինքն ջրափոսից և կրկին դարձաւ մամուկի մօտ: Ինչպէս հրեւում է կռիւը դեռ երկար կը տեւէր, սակայն երրորդ անգամին դոդոշը սխալուեց և չկարողանալով գտնել դէպի փրկարար խոտը տանող ճանապարհ՝ սկսեց արագ ուռչել ու փքուել և ապա սատկեց թունաւորուածի բոլոր նշաններով:

ՁԵՐ ԾԱՆՕԹՆԵՐԸ

օսիւն, Սուրէն, Սմբատանոյշ*,
Կորիւն, Խորէն, Խոսրովանոյշ*,
Պարոյր, Վրոյր, Աստուածատուր,
Արգար, Մարգար, Տէր-Խաչատուր։

Ազնիւ, Արտակ, Երանուհի*,
Պատ, Վաղինակ, Տիգրանուհի*,
Հայկ, Արմենակ, Սօս, Պերճուհի*,
Ղևոնդ-Երէց, Վան, Զարուհի*։

Բուզան*, Արայ, Էվեմիա*,
Ձուշան*, Աննա*, Փեվրոնիա*,
Պերճ, Գոհարիկ*, Կամոտարական,
Վարդան, Գատրիկ*, Զապէլ*, Տիգրան։

Գրատոմատ, Աշխէն*, Վիրգինէ*,
Արմէն, Արէն, Մանէ*, Նունէ*,
Անոյշ*, Հռիփսիմէ*, Գրիստինէ*,
Գիւղադնուհին մեր Կարինէ*։

Արգամ, Ասպրամ, Յուսիկ, Լուսիկ*,
Վահրամ, Արամ, Գագիկ, Գագիկ,
Չրանտ, Կոմիտաս, Արիստակէս,
Ներսէս, Աբաո, Ասպուրակէս։

Ռուբէն, Լևոն, Աշոտ, Արշակ,
Պարթևանոյշ*, Վարդ, Մանիշակ*,
Բագրատ, Սմբատ, Արփիկ*, Գիսակ
Տրդատ, Մխիթարատ, Սիսակ, Միսակ։

Երուանդ, Հայկակ, Նեկտարինէ*,
Մամբրէ, Մաժակ, Կատարինէ*,
Եղնիկ, Հմայեակ, Յուլիանէ*,
Վահէ, Կորնակ, Յուստիանէ*։

Աստղիկ*, Սուրիկ, Անանիա,
Ջօջիկ, Ջանիկ, Հերմոնիա*,
Անուշաւան, Թեր-Ալիշան,
Բարդիջան, Մալաթի, Նշան։

Նազիկ*, Գուլդէն, Սահականոյշ*,
Թոդիկ, Բարիկէն և Սիրանոյշ*,
Սամէլ, Տիրիթ, Սուրբ-Կարապետ,
Գնել, Հեթում, Մեծ-Հայրապետ։

Ցոլակ, Մեսրովբ, Խոսրովիդուխտ*,
Սեդրակ, Ջէնոբ, Հրաչեայ, Սանդուխտ,
Նորայր, Թորգոմ, Սեմ, Արտաշ,
Զարմայր, Ատոմ, Գիւտ, Փարախոտ։

ԿՈՐԻՒՆ։

ՋՂԱՑՊԱՆԸ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՔԸ.

Երէկիմահ Ջաղացպանը կանչեց իր չորս որդիները անկողնու մօտ և ասաց. «Որդիք, իմ խիղճս շատ անհանգիստ է, ես մեռնում եմ տանջանքով, որովհետև դիտեմ որ ինձ «ո ղ ո ր մ ի» ասող ամենևին չի լինելու. գիւղացիներին ես չէի թողնում Ջաղացը մտնեն, մինչև, որ նրանք հէնց Ջրաղացի դռան առաջ ինձ չէին տալիս իմ շ հ ա տ ը (Ջրաղացպանի բաժին ցորենը), և առնում էի մէկին երկու: Աստուած սիրէ՛ք, այնպէս արէ՛ք, սիրելի որդիք, որ ձեր երեսից էլ է ինձ մէկ «ողորմի» ասող լինի»:

—Միամիտ կաց, Հայրս, ասաց մեծ որդին, ես այնպէս կանեմ որ ո ղ ո ր մ ի ն չ ո դերեզմանից անպակաս լինի. դու գիւղացուն կանգնեցնում էիր Ջրաղացի դրանն ու ցորենն առնում մէկին երկու, ես նրանց կրկնակնեցնեմ մեղանից կէս վեստ Հեռու կամուրջի վրայ և ցորենը կառնեմ մէկին չորս:

—Մինչև բեռան մի Հակն ինձ չտայ, ես չեմ թողնիլ ցորենն աղայ, ասաց երկրորդ որդին:

—Ես եմ թողնում որ նա մի մսխալ ցորեն յետ տանի Ջաղացից էլի՛, գլուխը շարժելով ասաց երրորդ որդին:

—Հաս էս իմ Հրացանս մեռած է, որ գիւղացին ողջ առողջ Հասնի կամուրջին... լրացրեց ամենափոքր որդին:

—Աստուած ողորմի ձեր Հոգուն, որդիք, կրկնեց Հայրը և մեռաւ:

ԵՐԿՈՒ ԾՈՅԼ.

աղպատի խալիֆաներից մեկը շինել տուեց մի անկելանոց, որի ճակատին արաբերէն տակերէն առերով գրած էր՝ «Բացառապէս ծոյլերի համար»: Խալիֆան սրանով ուզում էր իմանալ թէ արդեօք մարքան դատարկաշրջիկ և անգործ մարդիկ կան քաղաքում, որոնք ծուլութիւնն իրանց համար բանուգործ են շինել:

Անկելանոցը, կամ աւելի լաւ է ասել ծոյլարանը՝ ամեն յարմարութիւն ունէր. լաւ ուտացնում էին, խմացնում, հագցնում: Չանցաւ կարճ մի ջոց և ահա այլևս աղատ տեղ չկար այդ առաջին շինութեան մէջ, խնդրատուներն օր աւուր շատացան, քաղաքը դատարկաշրջիկներով լցուեց, յուսալով որ մի օր էլ հերթն իրանց կը հասնի և կարժանանան այդ «երկրային արքայութեանը»:

Խալիֆան տեսնելով որ վաքըշատ գործ ունեցողն էլ թողեց իր արհեստը և ձրի հայ ուտելը դերադասեց, մտածեց հետևեալ խորամանկ միջոցին դիմել:—Հրամայեց իր ծառաներին, որ մի օր, ծոյլարանի բնակիչներից գաղտնի, կրակ տան ամբողջ շինութիւնը, բայց մեևնոյն ժամանակ ղղոյշ լինին մարդ չկորչի: Այդպէս էլ եղաւ: Կէս գիշերին յանկարծ աղմուկ լսուեց ամեն կողմից՝ «Հրդեհ, հրդեհ», և բոցը լուսաւորեց ամբողջ քաղաքը: Ծոյլարանը տակն ու վրայ եղաւ, թամբալները քաջացան. վազողը վազողի եղաւ. ծառաները շրջում էին սենեակից սենեակ, իսկ դռները կոտրատում, ամեն կերպ ճանապարհը հարթում, հիշտացնում:—Տաս րոպէ չանցաւ, դատարկուեց ամբողջապէս ծոյլարանը, իսկ բոցը շրջապատել էր բոլոր շինութիւնը:

Բայց որքան եղաւ Ծառանների զարմանքը, երբ սեղանակիցներից մէկում տեսան երկու Ծոյլեր սպառնած անկողնում անշարժ և անտարբեր։ Ոչ մէկը չէր աշխատում իր դլուխն ազատել, միայն մէկը տեսնելով որ սրդէն Ծուխը խեղդում է և բոցն արդէն ուզում է սպառնալիքներից ներս մտնել, սկսեց պոռալ. «Օդնեցէք, այրվում եմ, ի սէր Աստուծոյ, օդնեցէք»։ Երկրորդ Թշուառականը մինչև անդամ Ծուխանում էր «օդնութիւն» կանչելու, այլ խնդրում էր ընկերից որ իր փոխարէն նա պոռայ. «օդնեցէք, ես էլ եմ այրվում»։ Ծառաներն այլևս չկարողացան համբերել, դուրս բերին այս խնդասիրներին մրոտած և համարեա խանձուած։

Երբ խալիֆային հաղորդեցին այս լրտեսութիւնը, վերջինս չկարողացաւ իր ծիծաղը բռնել և ասաց. «Ուրեմն իմ քաղաքում իսկապէս երկու Ծոյլ մարդիկ են գտնուել, որոնց Աստուած ամենախիստ կերպով պատժել է։ Իրրև ողորմութիւն կերակրեցէք միմիայն այս երկու խեղդատներին. իսկ եթէ այսուհետև տեսնէք աւելի մարդ, անդորձ դատարկապորտ, սրը ողորմութիւն լինի խնդրելիս, իսկոյն կուդարկէք նորաշէն Ծոյլարանը, այն է՝ բանտը։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

44) Առաջ. Ա. Ս.

Ի բառ գիտեմ երկմանկանի,
Զատ ղժուար չէ, ով պատանի,
Խնդրի լուծումն ով կըհանի,
Նա պարգևի է արժանի։ *)

Ամբողջաթիւնն չէ կենդանի,
Ո՛չ մի, ոչ էշ չորքոտանի,
Այլ մի պտուղ է պիտանի,
Բայց չըկարծես թէ ծիլանի։—

Բառի սկիզբը դերանուն է,
Կ՚ուզես ասեմ.—յուզական է,
Իսկ երկրորդը մի թռչուն է,
Որի համը դեռ բերանումս է։
Այդքանը դեռ չէ բաւական.

Եթէ այդ բառը, Հնգական
Տառից կազմած, առնենք բաժան,
Երկու խօսքեր գործածական
Կըստանանք մենք ճիշտ Հայկական.

Երեք տառը մի գործիք է,
Դարբիններին մեծ կարիք է,
Իսկ մնացեալը դերանուն է,
Բայց չեմ ասիլ, այդ գաղտնիք է։

Առաջ. Ն.

45) Ո՞վ առաջին անգամ կարդաց Հայերէն։

*) Հանելուկս առաջին անգամ լուծողը կըստանայ „Ալբիւր“-ի հրատարակութիւններից մէկը, որը կըցանկանայ։

Առաջ. Սարդար.

46) Հետևեալ վեց քառակուսիի մէջ տեղաւորեցէք մի մի տառ այնպէս, որ կարդացուի կետադրութիւն։



Առաջ. Նոյնը.

47) Աստղանիշները բաղաձայն տառեր են, կէտերը ձայնաւոր, գտէք ինչ առած է։

* · * · * · * * · * · * · * · · ·

ը ե պ ւ

· * · * · *

ա

Առաջ. Նոյնը.

48) Դասաւորեցէք Ս տառի պատուհաններում մի մի տառ,



դրելով մարդ և հարս, սրահ և դրամ բառերը։

Առաջ. Նոյն.

49) Գտէք երեք տառ, երկուսը ձայնաւոր և մէկը բաղաձայն. դասաւորեցէք հետևեալ քառանկեան լինը ցանցի մէջ այնպէս, որ եթէ աջից ձախ, ձախից աջ, վերևից



ներքև, ներքևից վերև կարդալու լինենք ուսացուի մի մարդու անուն, իսկ եթէ անկիւնագծերի ուղղութիւնով կարդանք, ստացուի քաղաքի անուն։

Ջ Ո Ի Տ Ա Ս Ե Լ Ո Ի Կ

Ծխտը ծլվլալով ծիլ-ծիլ ելաւ։

ԲՆԲՈՒՄ

Առաջ. Ա. Սարդարեանց, նկարեց նկարիչ Գ. Բաշինջաղեանց։



Նախընթաց № 8-9-ի մէջ եղած՝ հանելուկների և բեռւսի բացատրութիւնները։

37) *Լանոյն.* 38) *կալ կալսելու.* 39) *դիռւմ.* 40) *ուռկան.* 41) *ջրաղաց.* 42) *հայելի.* 43) *գոմէշ.* Բեր. Հայկական անուններ՝ 1) Հայկանոյշ. 2) Թորգոմ, 3) Կամսար, 4) Շուշանիկ, 5) Երանեակ։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ։

Дозволено цензурою. Тифлисъ, 29 сентября 1885 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и

Շուշի. Մ. Տբ. Մ. Այո, անպատճառ պէտք է ուղարկել և բացատրուած Թիւները։ Ուղարկեցէք ընչզկս պէտք է, յաջմաննելը կըպատդրուին։

ԵՐԵՒԱՆ. Ա. Յ. Մ. Շարաշահկեցէք, խնդրում ենք, ապահովուն մի ապահէք։

ՓԱՐԻԶ, Ա. Ն. Չենք ուղարկածները դժբաղատաբար անկարող եղանք տանալ։ Ինչպէս տեղեկացանք փոստատնից, մերթատնից և գրաքննական յանձնաժողովից ոչ մի-կը չէ տացել։

ԹԻՖԼԻԶ. Բզնունի. Այո Պարոն, մեքանի անգամ յայտնել ենք, որ դուք Թիֆլիսում ենք և «Աղբիւր» ուղարկուի Ձեր բնակարանը, Բայց բաբեհաճեցէք համաձայնել, որ հատկ վոխելու համար պէտք է վճարել 5 կամ 7 կոպէկանոց մարկաներ, առանց այդ ընչզկս Ձեր, նոյնպէս և մես հատկ վոխադնների յանկուցիչները մեծ են անհատար և ուղարկուում են հին հատկերով։

ԺԵՆԵՎԱ. Մ. Սատանը, շնորհակալ ենք, բայց մինչև շաբաթ նախուելիքը չատանանք, չենք կարող յայտնել կըպատդրուի Թիւ ոչ։

ԲԱԳՈՒ. Յ. Ճ. Չենք պատուէրները պատրաստ են, կարող ենք տատնալ, ուղարկեցէք մեսցեալը։

«Մանկական զբաղաբան - ընթերցարանը» բաց է ամեն օր, բայ ուրբաթ և կիւրակի օրերը մեծ մինչև կէսօր։ Գրաբաղան-ընթերցարանը լինի է և պարբերաբար տատուում է հինց նրանց լոյս տեսնելուց մանկական և պատանեկական հատակի ընթերցանութեան յարմար պիտանի գրքերը (հ. հայերէն, ուսուցչէն, վրացերէն և (հ. այլ լեզուներով։

ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ 1886 ԹՒԻ
ԿԸԿԵՆ ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՄՇԱԿ

Լ Ր Ա Գ Ի Ր Ը

Մանրամասն յայտարարուելիքը կըհրատարակուի իր ժամանակին։
Հասցէ. Тифлисъ, Редакція газеты „МШАКЪ“
Խմբագիր ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑ

ՆՉԱՆ Կ. ՊԻՐՊԻԲԵԱՆ ԵՒ Ս. ՏԻՕՎԼԷՓԵԱՆ

Լաւագոյն ֆրանսացի մեծանուն վիպասանին ամէն նշանաւոր գործերն է. ազգագրական, զոր Մասեաց Մ. Խրմբագիրը Կ. Ս. Իւթիւճեան հմտութեամբ վերատես աչքէ անցնելով և լեզուն մաքրագրեան ու անհրաժ պեպեցիկ բառերով մեծ խնամք տանելով մեզ յանձնած էր, ատպատած ու ի վաճառ հանուած է։

Գինը հատորի վճարն է 100 դրուշ։

Ուստահայք կարող են պահել «Աղբիւր» խմբագրութեան միջոցով։

ԲԱՑՈՒՄԸ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻԿԱՅ 1886 ԹՈՒԱԿԱՆԻ

„ԱՂԲԻՒՐ“

ՄԻԱՄՏՆԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

(ՏԱՐԻՆԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 12 ՀԱՄԱՐ 2–3 ՏՊԱԳՐԱԿԱՆԹԵՐԹ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։

II) Բանաստեղծութիւններ։

III) Գիտութիւն և արուեստ։

IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։

V) Այլ և այլք։

ՋՈՒԱՐԱԿԱՆ

VI) Մանկական, ֆրեբէլեան, շախմատի և այլ խաղեր, բերասներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, Հանելուկներ, շուտասելուկներ։

VII) Երգեր ձայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, և տեղեկութիւններ։

IX) Առաջնորդութիւններ, խորհուրդներ։

X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։

XI) Խաղն լուրեր։

XII) Պատասխաններ։ Յայտարարութիւններ։

Երկրորդ տարին։ Հրատարակւում է առանձին թերթով տարէկան երեք անգամ։ Տարեկան բաժանորդները առանում են երեք պրեմիա՝ յունուարին, յուլիսին և դեկտեմբերին։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը **3** ռուբլի է, կէս տարուանը՝ **2** րուբլի, առանձին համարները **50** կոպէկ։

Հասցէն՝ Тифлисъ, „Редакція „Агбюръ“. կամ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիրը—Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ։